

ԴԱՍԱԳԻՐՁ

7145

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Գ. ՏԱՐԻ

Երկրորդ բարեփոխած տպագրութիւն

ԾՆՏԱՎԱՅՐ

(ԹԻՖԼԻՍ ՔԱԴԱՐԸ)

ԲՆԱԳԱԻԱԾ

(ԹԻՖԼԻՍԻ ԳԱԽԱԾԸ)

Կ Ո Վ Կ Ա Ս

ԹԻՖԼԻՍԻ ճահանգը



ԿԱԶՄԱՑԻՆ

ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ



ԹԻՖԼԻՍ

Տպարան Հ. ՅՈՒՐԻ. Պ. Դ. Շ. Ա. Մ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

1915

91(075)
7-21

522

13,550



91(025)

17-21

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

70
99

q. SURH

ԵՒՆԻԿԱԿ ԱՅ

(ԹԻՖԼԻՍ ԳԱՂԱՔԸ)

ԲԱԱԳԱԿԱԾ

(ԲԻՖԼԻՄԻ ԳԱԻԱՆԼ)

Թիգլիսի նահանգը

1004
1894

и съмънътъ въвърхътъ на този човекъ е бѣзъръбъ

1 7 8 15

Ա. Ա. ԶԱՐԵԳԻՆ

ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ



Ф. В. Б. Л. П. У.

Տպարան «ՊՐՕԳՐԵՍ», Լոբիս-Մելիքյան փող.

1815

אַתָּה יְהוָה

31386-4.2

Կազմած է ըստ «Հայոց եկեղեցական դպրոցների ուսումնական ծրագրի»:

Զեռքի տակ ենք ունեցել՝ լեսդաֆտի, Կրուբերի, Իվանովի,
Խրամելովի, Զաբարի, Թաւարբէգեանի աշխատասիրութիւնները
և այլ ձեռագիր նիւթեր:

2004

14832 : 58

• բա ու մեր ընտանիք է պատրիարք մաս պահպանութ զա Ա
մա կառաւութ ընտանիք պահպանութ ու պահպան դեմ մեր
ըստ դեմ է կառաւութ ընտանիք և պահպանութ պահպան

ՅԱՅԾԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

գ. ՏԱՐԻ պատճենի պահպանի մասին ուղարկությունը պահպանի մասին ուղարկությունը պահպանի մասին ուղարկությունը

Ա. ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Убрать скобки

Այս բնակարանը, որտեղ մենք ապրում ենք մեր ծնող-ների, հետ' մեր տանըն է:

Մեր տան բոլոր անդամները միասին կազմում են մեր ընտանիքը։ Ընտանիքին ուրիշ խօսքով ասում են նաև օջախ։ Ընտանիքի մեծը տան աւագ անդամն է։ Ընտանիքի աւագ անդամները սպավորաբար լինում են պապն ու տատր։

Տունը պահում են մեր ծնողները, մեր հայրը աշխատում
է դուրսը, իսկ մայրը՝ տանը։ Սա է կատարում տան գործե-
րը։—Եփում է, կարում է, ինամում է ու հակում մեզ վրա։

Մեր ծնողները համ մեզ ինսամում են, համ էլ՝ հոգս են
տանդավ, որի մենք ուսում և կրթութիւն ստանանք և վառ պա-
հենք մեր հայրենի օջախը:

2. ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ՄԵՐ հայրենիքը այն երկիրն է, որտեղ ծնւել են ու ապրել են մեր պապերն ու նախահայրերը, որտեղ գտնուում են նրանց հին-հին յիշատակները և որտեղ ապրում է մեր ազգի մեծ մասը։

ՄԷԿԸ կարող է ծնւել իր պապական հայրենիքից դուրս, մի օտար տեղ, բայց նրա հայրենիքը կը լինի դարձեալ իր պապերի երկիրը։

Մարդու ծնւած տեղը նրա ծննդավայրն է, իսկ նրա պապական երկիրը՝ հայրենիքն է։

Ինչ-ինչ պատճառներով մարդ կարող է հեռանալ իր ծնընդավայրից, գաղթել իր հայրենիքից, բայց դարձեալ ծննդավայրը կը լինի իր ծնւած տեղը, հայրենիքը՝ իր պապական երկիրը։

3. ՀԱՅՐԵՆԱԴԻՏՈՒԹԻՒՆ

Այն գիտութիւնը, որ մեզ ծանօթացնում է մեր հայրենիքի հետ, կոչում է Հայրենագիտութիւն։

Հայրենագիտութեան միջոցով մենք ձեռք ենք բերում մեր հայրենիքին վերաբերեալ հետեւեալ տեղեկութիւնները։

ա.—Ռուտեղ է գտնուում մեր հայրենիքը։

բ.—Ի՞նչպիսի մակերևոյթ ունի նա,

գ.—Ի՞նչպիսի օդ—կլիմա ունի,

դ.—Ի՞նչ բոյսեր ու կենդանիներ կան այնտեղ։

ե.—Ի՞նչ բնակչութիւն ունի, ինչով են պարապում և այլն։ Հայրենագիտութիւնը սկզբնական մասն է այն գիտութեան, որ կոչում է Ընդհանուր Աշխարհագրութիւն։




Բ. ԹԻՖԼԻՍ

Թիֆլիսը այժմ մի մեծ քաղաք է։ Այդ քաղաքը հիմնել է վրացիների Վախթանգ Գորգ-Ապան թագաւորը հինգերորդ դարում։ Քաղաքում եղած հանքային տաք ջրերի պատճառով անունը դրել է թրիխի։ Թրիխի վրացերէն նշանակում է տաք։ Այդ հանքային ջրերը, դեռ շատ վաղուց—քաղաքի շինուելուց էլ առաջ—յայտնի են եղել ժողովրդին։

Վախտանգի որդին պարսպով պատեց Թիֆլիսը և դարձրեց իր թագաւորանիստ քաղաքը—մայրաքաղաք։

Թիֆլիսը վրաց իշխանութեան տակ մօտ քսան անդամ ենթարկել է թշնամիների յարձակմանը։ Վերջին անգամ, 1795 թւին, քաղաքն աւերեց պարսից Աղա-Մահմէդ-Խանը։

1801 թւին վրացիների վերջին թագաւոր Գէորգ XII-ը Վրաստանը յանձնեց Ռուսաց կայսր Աղէքսանդր Ա-ին, որովհետև չըկարողացաւ իր երկիրը պաշտպանել թշնամիների անվերջ յարձակումներից։ Այդ օրւանից մինչև այսօր Թիֆլիսը գտնուում է սուսաց իշխանութեան տակ։



Հին Թիֆլիսը

(Նկար 1850 թ.)

1. Հին Թիֆլիսը

Հին Թիֆլիսը եղել է պարսպով՝ շրջապատւած՝ մի փոքր քաղաք։ Նրա հնութիւններից մինչև այսօր մնացել են։

ա.—Մետեխի ամրոցը, որ հիմա բանտի տեղ է ծառայում, որտեղ թաղւած է Վարդան Մամիկոնեանի աղջիկ սուրբ Շուշանիկը։ Նրա գերեզմանի վրայ եկեղեցի է շինած։

բ.—Հայոց Վանքի աւագ եկեղեցին, որ շինւած է 1720 թվին։ Նրա շուրջը մի ժամանակ եղել է անտառ։

գ.—Վրացիների Սիօնի տաճարը, որի հիմքը դրել է Վախտանգ Քորդ-Ասլան թագաւորը 446 թվին։

դ.—Անչիսխատի եկեղեցին, որ կառուցւած է 614 թվին։

ե.—Ս. Դաւթի մատուռը, որ շինւած է վեցերորդ դարում։ Այստեղ թաղւած են ոռւս գրող Գրիբոեդովը, վրացիների բանաստեղծ Ճաւճաւաձէն, Կիսլիանին, Ծերեթելին և ուրիշ հասարակական գործիչներ։

զ.—Թաղաքի պարսպի աւերակները՝ ու Սօլօլակի սարի վրա եղած բերդի մասցորդները։

Հին Թիֆլիսն այնքան փոքր է եղել, որ ունեցել է Մետեխի (Նարի-Ղալա), Սէյդաբաղի (Խարբուլի) և Նիսանի (այժմ մեան Հաւլաբար) թաղերը միայն։ Թաղաքի պարիսպը հասել է մինչև Սօլօլակի սարերը։

Մետեխի ամրոցն իր շրջակայքով եղել է հին Թիֆլիսի ամենաշքեղ մասը։ Այդ ամրոցումն է գտնւել վրաց թագաւորակերպի պալատը։

Հին ԲնԱԿԻՉՆԵՐԸ

Դեռ 1671 թվին, Թիֆլիսի բնակիչների մեծ մասը եղել են հայեր, թէև նա եղել է վրացիների մայրաքաղաք։

1701 թվին Թիֆլիսն ունեցել է 20,000 բնակիչ, որից 14,500 հայ, 3000 թուրք, 2000 վրացի, մասցածը՝ յոյն, հրէայ և ուրիշ ազգեր։ Ամեն մի ազգ ազատ դաւանել է իր կրօնը։

Հայերը նստակեաց կեանք ունէին, դրա համար էլ կոչւում էին մօխալահի, որ վրացերէն նշանակում է քաղաքացի։ Դրանք էին, որ մեծ մասամբ պարապում էին արհեստներով և առուտուրով։

Մօքալաքիները ունէին որոշ իրաւունքներ և օրինակ՝ յանցաւոր մօքալաքիներին միւս դասակարգերի նման մարմական պատժի չէին ենթարկում, այլ նրանցից դրամական տուգանք



Մօքալաքի գինագործ

ցաւոր մօքալաքիներին միւս դասակարգերի նման մարմական պատժի չէին ենթարկում, այլ նրանցից դրամական տուգանք

Էին վերցնում: Մօքալաքիները իրաւունք ունէին մտնելու պետական ծառայութեան մէջ:

Թուրքերից մի մասը եղել են սէյիդներ, այսինքն Մահմեդի ժառանգներ. սրանք սկզբից բնակւում են հանքային ջրերի մօտերքը և հետզհետէ շէնացնում են իրենց բնակավարը, որոնց անունով էլ այդ քաղաքամասը կոչւում է Սէյիդ-աբադ, այսինքն՝ սէյիդների շէնացրած թաղ:

Մնացած թուրքերը հասարակ ժողովուրդ էին, որոնցից շատերը հացթուխներ, մսագործներ և առաւելապէս մըգավաճառներ էին: Թուրքերը հին թիֆլսում ունեցել են երկու մզկիթ, որոնցից և ոչ մէկն այժմ չըկայ: Այժմեան եղածները համեմատաբար նոր են կառուցած:

Թուրք գրագիր

հակում չունելու քաղաքում ապրելու և առուտուրով պարապելու: Նրանք գլխաւորապէս ապրում էին իրենց պապական կալւածքներում:


Քաղաքում մեծ մասամբ ապրում էին այն վրացիները, որոնք զինսորական ծառայութեան մէջ էին և պալատական աստիճանաւորների պաշտօններ ունէին: Սրանք համարւում էին ժամանակաւոր քաղաքացիներ:

Այս պաշտօնեաներն ունէին տան բազմաթիւ ծառայողներ և ճորտ գիւղացիներ, որոնք մշակում էին իրենց տէրերի հողերն ու այգիները:



ՅՆԱԿԻՉՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

Բուն քաղաքացիները պարապում էին զանազան արհեստներով: Միևնոյն արհեստով պարապողները կազմում էին առանձին խմբակցութիւն, որ կոչւում էր համքարութիւն: Ամեն մի համքարութիւն իր միջից ընտրում էր մէկին, որին տալիս էր Ռւսաբաշի անունը:




Վրացիներ

Առուտուրը կենդրոնացած էր թագաւորական պալատի շուրջը, այժմեան էքզարխեան հրապարակում: Այդ հրապարակը մօտ էր խսկական շուկային, որ յետոյ կոչւել է Հայկական Շուկայ (Արմանսկի Բազար): Այդ շուկայում գտնուում էին ոչ միայն մթերքների խանութներ, այլ և բազմաթիւ արհեստանոցներ:

Գլխաւոր առուտուրը կազմում էր մորթու, ներկի (բօյեա) և մետաքսի արտահանութիւնը դէպի Պարսկաստան, Տաճկաստան, Հնդկաստան և ուրիշ երկիրներ:

Շուկայից մի փողոց գընում էր թուրքի Մէյդանը: Առևտրական մի կենդրոն էլ համարւում էր այդ մէյդանը, որտեղ ծախւում էին զանազան բերքեր, հացահատիկ և ալիւր: Այդ հրապարակը կոչւել է նաև Ալիւրի Մէյդան: Թէ Հայկական Շուկայում և թէ Ալիւրի-Մէյդանում տիրում էր մի առանձին կենդանութիւն:

Այս շուկաներում կարելի էր պատահել և հայի, և թուրքի, և վրացու, և հրէայի, ամենն իրենց ազգային հագուստով:



Նոր Թիֆլիսը

(Փոխավոր պատմութեան)

4. ՆՈՐ ԹԻՖԼԻՍԸ

1801 թւին Թիֆլիսն անցնելով ոռուսաց ձեռքը, սկսում է հետզետէ մեծանալ և գեղեցկանալ բազմաթիւ հոյակապ շէնքերով. թատրոններով, կամուրջներով, հիւանդանոցներով, զօրանոցներով, արձաններով, թանգարաններով և ուրիշ կրթական հիմնարկութիւններով:

Աւելի գեղեցիկ են քաղաքի այն մասերը, որոնք յետոյ հն շինւած: Նրանք ունեն լայն, երկար և կանոնաւոր փողոցներ: Իսկ քաղաքի մասերի տները հասարակ են, փողոցները նեղ, ծուռ ու մուռ և անկանոն:

Այժմեան քաղաքն ունի մօտ 10 վերստ երկարութիւն, 4 վերստի չափ լայնութիւն և 36 վերստ շրջապատ. տարէցտարի էլ աւելի ու աւելի մեծանում է: Այժմ քաղաքում կան 1244 փողոց, 23 հրապարակ և 14 զբոսավայր, — պարտէզ:

Թիֆլիսն այժմ կովկասի վարչական, ուսումնական և առետրական կենտրոնն է:

Թիֆլիսումն է նստում երկրի կառավարչապետը, որ կոչում է Փօխարքայ:

5. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Քաղաքը կառավարելու համար 1801 թւին ոռուսները հիմնեցին մի դիւանատուն, որ կոչում էր Քաղաքային Ոստիկանական Վարչութիւն: Այդ դիւանատունը երկար կեանք չունեցաւ և կարիք գրացւեց բարեփոխելու:

Տաս-տասնըհինգ տարուց յետոյ՝ այդ վարչութիւնը փոփոխութեան ենթարկեց և քաղաքն ունեցաւ իր երեք ներկայացուցիչը այդ վարչութեան մէջ: Խոկ 1840 թւին քաղաքին իրաւունք տրեց ունենալ իր Քաղաքային Վարչութիւնը՝ ընտրովի քաղաքագլխով և անդամների հետ միասին: Առաջին քաղաքագլխութը եղել է Յովհաննէս Իզմիրեան: Քաղաքային Վարչութիւնը վերջնականապէս կանոնաւորւեց 1875 թւին և մինչև հիմա էլ շարունակում է: Այդ վարչութիւնը գտնուում է երեանեան հրապարակի վրայ, իր սեփական մեծ շէնքում:

Քաղաքի առուտուրը կանոնաւորելու համար կովկասի փոխարքայ իշխան Վարանցովի խորհրդով հիմնեց Առևտրական Վարչութիւն: Այդ վարչութեան մէջ մտնում էին շուկաների վերահսկիչները, որոնք հսկում էին առուտառքի վրա:

Քաղաքացիների և արհեստաւորների համար կային առանձին մասնաւոր վարչութիւններ: Իւրաքանչիւր վարչութեան մէջ մտնում էին համքարութեան Ռւստարաշին և վեց ուրիշ անդամներ: Մրանք էլ իրենց համքարային գործերն էին կառավարում:

6. ՔԱՂԱՔԱՄԱՍՆԵՐ

Այժմեան քաղաքը բաժանւած է ոստիկանական 12 մասի: Առաջին քաղաքամասն է՝ Վէրիսկին, 2-ը՝ Տէատրալին, 3-ը՝ Դվօրցովին, 4-ը՝ Բազարին, 5-ը՝ Պօրօնցովսկին, 6-ը՝ Նաւթուղը, 7-ը՝ Հալաբարը, 8-ը՝ Պեսկովսկին (Չուղուրէթ) 9-ը՝ Կուկիան, 10-ը՝ Միխայլովսկին, 11-ը՝ Զավակգալնին-(Կայարանինը), 12-ը՝ Դիդուլէն:

Իւրաքանչիւր քաղաքամասի կարգապահութեան ընդհանուր վերահսկիչը կոչւում է պրիստա. Նա ունի մի օգնական, մի քանի թաղապետներ և քաղմաթիւ քաղաքապահ ոստիկաններ. Բոլոր պրիստաները ենթարկում են Ոսիկանապետի իշխանութեանը. Ոստիկանապետը ենթարկում է նահանգապետներին, նահանգապետն էլ երկրի կառավարչապետին՝ Փոխարքային:

Կովկասի Փոխարքայի պալատը գտնւում է Դվորցովից կոչւած քաղաքամասում: Հնուց այդ քաղաքամասը կոչւել է Տափի քաղաք, որ մինչև այս օր էլ յիշատակում է:

Թիֆլիսի նահանգապետի դիւնաստունը գտնւում է Սօլոյակ կոչւող թաղամասում, Ռտիշևսկայեա և Բեհրութեան փողոցների անկիւնում: Թիֆլիս քաղաքի ոստիկանապետի Վարչութիւնը գտնւում է Կովու թաղում, Վելեամինովոկի փողոցի վրա:


7. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՐԻՄԱ

Քաղաքի գործերը կառավարելու համար քաղաքի տասներկու թաղամասերում ապրող այն բնակիչները, որոնք ունեն անշարժ կալւածք, իրենց միջից ընտրում են ձայնառներ. Այդ ձայնառների խորհուրդը կոչւում է քաղաքային խորհուրդ կամ դումա:

Քաղաքային բուման իր միջից ընտրում է քաղաքագլուխ և մի քանի օգնականներ: Քաղաքագլուխն իր օգնականների հետ ղեկավարում է քաղաքի բոլոր գործերը: Քաղաքագլուխն իր օգնականների խորհուրդն էլ կոչւում է քաղաքային Վարչութիւն:

Քաղաքային խորհրդի և Քաղաքային վարչութեան անդամները կարող են լինել քաղաքում ապրող ամեն ազգութիւնից:

Գ. ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԿՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ



Սօլոյակի սարի բերդի մասցը գները

1. ԹԻՖԼԻՍԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ս. Դաւթի սարի գագաթից նայելիս՝ տեսնում ենք, որ Թիֆլիսը շինած է մի փոսի մէջ: Նրան շրջապատում են լեռներ ու բլուրներ: Քաղաքի մակերեսոյթը՝ գետեր միատեսակ չէ: Կան ցածր և բարձր տեղեր:


Քաղաքի միջով հոսում է կուր գետը և քաղաքը բաժանում երկու մասի: Գետի ափերը որոշ տարածութեան վրա հարթ են: Զախ ափից հետզետէ բարձրանում են Մախաթ և Շիլափլաւ սարերի զառիվայրերը. աջ ափից՝ Ս. Դաւթի (Մամանակիթ, Մթածմինդա), Սօլոյակի և Շինդիսեան սարերի զառիվայրերը:

Այսպիսով տեսնում ենք, որ քաղաքն ունի երկու թեքութիւն և երեք փոքրիկ բարձրավանդակներ: Բարձրավանդակներն են՝ Արսենալի, Հալաբարի և Մետեխի:

Թեքութիւնների և բարձրավանդակների վրա այժմ կան հետեւեալ թաղերը.

Կուր գետի աջ ափին՝ Վերայի, Մթածմինդայի, Տափի, Սօլոցակի, Կոլոր, Խարփուխի, Մէրգաբաղի և Օրթաճալայի թաղերը:

Զախ ափին՝ Դիղուբէի, Նախալովկայի, Կուկիայի, Չուղուրէթի, Սաղի, Հաւլաբարի, Շան և Նաւթլուղի թաղերը: Կազմւել են և նոր թաղեր՝ Վակէ ու Սաբուրթալո:



ԴԱՅ 434 780

Կուր գետը առաջ գոյացած է Եղանակի համար անպէտք է համարում, որովհետեւ քաղաքի կեղտառութիւնները կոյուղիներով թափւում են նրա մէջ: Քաղաքը իր խմելու ջուրը ստանում է Աւչալայի ջրանցքից. այդ ջուրը բազմաթիւ խողովակներով ցրւում է ամբողջ քաղաքում: Ամառը քաղաքը խմելու ջրի պակասութիւն է զգում: Քաղաքային Վարչութիւնը մտադիր է քաղաքին ջուր մատակարել Ծալկայի աղբիւրներից:

Թիֆլիսը, քաջի Կուր (վրացերէն՝ Մթկուարի) գետից, ուրիշ ջրեր չունի. կան մի քանի աննշան աղբիւրներ և առւակներ, որոնք թափւում են Կուրի մէջ, որոնցից աչքի ընկնողն է Վերայի գետակը:

Կուր գետը հոսում է երկարութեամբ մօտ 10 վերտ: Նրա լայնութիւնը քաղաքում տեղ-տեղ 80—150 սաժէն է, իսկ Մետեխի տակը մօտ 15 սաժէն է: Նրա հունը այնքան ցածր է, և ափերն այնքան ժայռոտ, որ հնարաւորութիւն չեն տալիս արջակայքը ջրելու: Նոյնիսկ քաղաքի ամենացած մասում՝ Օրթաճալայում, որտեղ գետն ու-

մարջօրավիք մաղործամբ որոնձ հացման վայրուն և մասնաւո՞նի մօտ 430 սաժէն լայնութիւն՝ դարձեալ այգիները ջըելու համար գետից ճախարակաձեւ մեքենաներով ջուր են բարձրացնում: Քաղաքում Կուրի վրա կան նաև շատ ջաղացներ:

Կուրն իր սկիզբն առնում է Կարսի շրջանում, Զառիշատի լեռներից, երկար ճանապարհ կտրելուց յետոյ, գալիս անցնում է Թիֆլիսի միջով և գնում, թափւում է Կասպից ծովը: Կուրի երկարութիւնը հաշւում են մօտ 1100 վերտ: Կուրը իր վերին հոսանքում արագահոս է, իսկ միջին և ստորին հոսանքներում՝ դանդաղ:

Կուր գետի ջուրը այժմ խմելու համար անպէտք է համարում, որովհետեւ քաղաքի կեղտառութիւնները կոյուղիներով թափւում են նրա մէջ: Քաղաքը իր խմելու ջուրը ստանում է Աւչալայի ջրանցքից. այդ ջուրը բազմաթիւ խողովակներով ցրւում է ամբողջ քաղաքում: Ամառը քաղաքը խմելու ջրի պակասութիւն է զգում: Քաղաքային Վարչութիւնը մտադիր է քաղաքին ջուր մատակարել Ծալկայի աղբիւրներից:

3. Կ Լ Ի Մ Ա Ն

Ինչպէս տեսանք, Թիֆլիսը գտնուում է մի փոսի մէջ, որ շրջապատւած է երեք կողմից սարերով: Ամառը Թիֆլիսում սաստիկ շոգ է լինում, պատճառն այն է որ շրջապատող մերկ սարերը տաքանում են ու տաքացնում քաղաքի օդը, այնպէս որ քամի ըլխաղալով՝ քաղաքի օդը մնում է անշարժ:

Գարնամն ու աշնանը օդը դուրեկան է լինում, իսկ ձմեռը՝ մեղմ: Զմեռը քիչ է ձիմն գալիս եկածն, ել շուտով հալւում է:

Թիֆլիսի կլիման առահասարակ բարեխառն է: Նա կապունի իրեն շրջապատող հեռաւոր լեռնաշղթաների հետ, որոնց բարձր գագաթների ձիւնը երբէք չի հալւում: Ամառայ շոգից ազատելու համար, քաղաքի բնակիչների մեծ մասը գնում է ամառանոց՝ Կոջոր, Մանգլիս, Բէլի-Կլիւչ, Ծղնէթ, Ղարաքիլիս, Դիլիջան, Բորժոմ, Աբասթուման, Սուրամ, Ուրաւել, Բա-

կուրիանի և կովկասի հանքայի ջրերը՝ Պետիգօրսկ, Կիլօվօդսկ, Փելեզնօվօդսկ, Եսսենտուկի և այլն:

4. ԳԵՏՆԻ ՑԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի գետնի հողը՝ միատեսակ չէ, զանազան տեղերում նա զանազան յատկութիւն ունի:

Ա. Քաղաքը շրջապատող սարերի ստորոտները՝ գետափից սկսած՝ մեծ մասամբ քաղաքարոտ են ու աւագոտ:

Բ. Քաղաքի վերին մասերը՝ կուկիայի և Դիդուքէի թաղերի հողը՝ բուսականութեան յարմար աւագախառն սևահող է:

Գ. Վերա և Հաւլաբար թաղերի գետինը կաւահող է, որից պատրաստում են աղիւս և կաւի զանազան ամաններ:

Դ. Շան-թաղի շրջակայքում գետինը կրահող է, որից գաջ են պատրաստում շինութիւնների համար:

Ե. Օրթաճալայի գետինը խոնաւ աւագախառն սևահող է, ուր և աճում է քաղաքի բուսականութեան մեծ մասը:

Զ. Խարիուսի, Սէյդաբաղի, Սօլոլակի և Մթածմինդայի թաղերի գետինը կազմւած է մեծ մասամբ ապառաժ կապոյտ քարից, որ գործ են ածում շէնքերի համար: Սէյդաբաղի մօտերքում՝ Թարորիս-Մթաճալայի գետնից բղխում են հանքային տաք ջրեր, որոնց վրա շինուած են մի շարք բարդանիքներ:

5. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հողի և ջրի անյաջող պայմանների պատճառով՝ քաղաքի բուսականութիւնը համարեա աղքատ է. եղածն էլ պահում է արհեստական միջոցներով: Բայց ինչպէս երևում է պատճառութիւնից՝ հին ժամանակ քաղաքը շրջապատող լեռներն ու այժմեան քաղաքի մի մասը անտառնապատ է եղել:

Քաղաքի բուսականութիւնը կազմում են:

Ա. Վերայի և Մուշտայիդի այգիները: Մուշտայիդի այգու

համար պատմում են, որ մի պարսիկ բարձր հոգևորական՝ Մուշտայիդ, տնկել է այդ այգին, որի անունով էլ այգին կոչւել է Մուշտայիդ:

Բ. — Քաղաքի կենդրում՝ Ալէքսանդրեան, Փոխարքայի և Պուշկինեան պարտէզները: Պուշկինեան պարտիզում գտնում է ուսու բանաստեղծ Պուշկինի արձանը, Ալէքսանդրեան այգում՝ ուսու գրող Գոգոլի արձանը:

Գ. — Սօլոլակի սարի ետկը՝ Բուսաբանական այգին: Այս այգում աճեցնում են թէ կովկասի և թէ ուրիշ երկրների բոյսեր:

Դ. — Շինդիսեան սարի ստորոտներում՝ Կրծանիսի այգիները:

Ե. — Օրթաճալայում՝ Օրթաճալայի այգիներն ու բանջարանոցները:

Բացի սրանցից քաղաքի զանազան վայրերում կան ծաղկանոցներ, պարտէզներ և ծառեր: Մախաթ սարին կից, մի բլրակի լանջի վրայ տնկած է Խուզադեան արհեստական ձեռատունկ անտառը:

Քաղաքային այգիները տալիս են թարմ ու աղնիւ տեսակի մրգեղէն՝ նուշ, սալոր, կեռաս, ծիրան, դամբուլ, տանձ, խնձոր, դեղձ, խաղող, ունաբ, սերկեիլ և այլն: Բանջարանոցներից ստացւում է՝ բողկ, տակ, վարունկ, լոբի, սոխակ այլն:

6. ԿԵՆԴԱԿԱՆՆԵՐԸ

Թիֆլիսի բնակչութիւնը առհասարակ չի զբաղեցում ոչ անասնապահութիւնով և ոչ էլ խաշնարածութիւնով: Կան մի քանի թաղեր միայն, որոնց բնակիչների մի մասը պահում է ընտանի կենդանիներ.—կով, եղ, ձի, գոմէշ և այլն:

Նաւթլուղի, Շան-թաղի, Սաղի, Օրթաճալայի, Դիդուքէի, Նախալովկայի ու Վերայի բնակիչների մի մասը կովեր է պահում: Գարունքից աշուն նրանց նախիրը արածում է քաղաքի շրջակայ արօտներում, իսկ ձմեռը այդ անսառւններին պահում են առնովի խոտ ու դարմանով:

Բնակիչների մի մասն էլ, որ պարապում է կառապանութեամբ ու սայլապանութեամբ, պահում է ձիեր, եղներ, գոմէջներ և այլն։ Առնասարակ անասուններ պահում են քաղաքի ծայր թաղամասերում։

Քաղաքին մսացու կենդանիներ տալիս են նրա շրջակայքի զեւդ ու քաղաքները։ Այդ կենդանիները մորթում են քաղաքային սպանդանոցներում, որ գանուում են նաւթլուզ քաղաքամասում։

7. ԲՆԱԿԱՏԵՂԻ

Մարզիկ ապրում են երկրի վրայ թէ ցուրտ և թէ տաք տեղերում։ Նրանց ապրելու տեղը կոչում է բնակավալը կամ բնակատեղի։

Բնակավայրը լինում է զիւդ կամ ժեն, աւան կամ զիւդախողի և քաղաք։

Թիչ բնակչութիւն ունեցող տեղը կոչում է զիւդ կամ ժեն։ Գիւղից մեծ բնակավայրը կոչում է աւան կամ զիւդախողի։ Գիւղաքաղաքից մեծը կոչում է քաղաք։

Մի քանի զիւդեր միասին կազմում են զիւդական հասարակութիւն։ Մի քանի զիւդական հասարակութիւն միասին կազմում են վիճակի։ Մի քանի վիճակ միասին կազմում են մի գուառ։ Դա տան ունենում է մի քաղաք, որ կոչում է գուառական քաղաք։ Մի քանի գուառ միասին կազմում են մի նահանգ։ Նահանգի մեծ քաղաքը կոչում է նահանգական նահանգ։ Մի քանի նահանգներ միասին կազմում են մի երկիր։ Մի քանի երկիրներ միասին կազմում են մի պետքին կամ տէրութիւն։

8. ԹԻՖԼԻՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Թիֆլիս նահանգական քաղաք է։ Նա ունի 325,000 բնակիչ, սրանից մօտ 120,000-ը հայեր են, մեծ մասը հայութ-

ուուրչականներ, 50,000-ից աւելին վրացիներ, 64,000-ի չափ ուուններ։ Թէ վրացիները և թէ ուունները կրօնով յունադաւան են։

Քաղաքի մասցած բնակիչները զանազան ազգեր են։ Թուրք, պարսիկ, լիդիկ, հրէաներ, գերմանացիներ, ֆրանսացիներ և այլն։ Բնակչութեան թւի կողմից թիֆլիսն այսօր մուսաստանի քաղաքների մէջ բռնում է ութերորդ տեղը։

Քաղաքի ամենաբազմամարդ թաղն է Հաւլաբարը, որ ունի 50,000 բնակիչ, որոնցից մեծ մասը հայեր են։ Հաւլաբարի հին մասը, — Հայոց Կարմիր-Աւետարան եկեղեցու շրջակաբը, հին ժամանակ կոչվում էր Նեսի-Հաւլաբար։ Այժմեան Հաւլաբարը թէ ընդարձակել և թէ բարեհորսովել է զանազան գեղեցիկ և կուլտուրական հիմնարկութիւններով։

9. ՊԱՐՍՎՄՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԱՐՃԵՍՏՆԵՐ

Թիֆլիսի բնակիչների մի մասը պարապում է վաճառականութիւնով։ Իբրև մեծ քաղաք՝ Թիֆլիսը առևտրական կապեր անի իր շուրջն եղած բոլոր բնակավայրերի հետ։ Քաղաքում կան թէ խոշոր առևտրական տներ և թէ բուզմաթիւ մանր վաճառականներ։

Բացի առևտուրից, բնակչութեան մի խոշոր մասը՝ տղամարդ թէ կին, պարապում են զանազան արհեստներով, որոնց համար կան կաշու, թաղիքի, ծխախոտի, ձէթի, սալոնի, խրմիչըների, տախտակի, կոնֆէտի և այլ բազմաթիւ գործարաններ ու արհեստանոցներ։


Բնակիչների մի մասն էլ ծառայում է երկաթուղու կայարանում և երկաթուղու վրայ, արամւայի վրայ, պոստ-հեռագրաներում, գատարաններում, վարչական այլ և այլ հիմնարկութիւնների մէջ, դպրոցներում, հիւանդանոցներում, հոգեւոր և մարմնաւոր հաստատութիւններում, բանկերում, զօրանոցներում և այլն։

10. ԹԻՖԼԻՍԻ ՆՇԱՆԱՀՈՐ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք քաղաքի կենտրոնում դանւում է Կովկասի Փոխարքայի պալատը: Նրան կից շինած է Ռուսաց գինուրական տաճարը:

Թիֆլիս ունի նաև հետեւալ հիմնարկութիւնները.

Դպրոցներ.—Կանանց բարձրագոյն կուրսեր, Ռւսուցչական ինստիտուտ, Ներսիսեան Հայոց Հոգեոր դպրոց, Վրաց հոգեոր սեմինարիա, տղայոց 8 և օրիորդաց 6 գիմազիօն, Բէալական դպրոց, Հայոց Յովանեան և Գայիանեան օրիորդաց միջնա-



Ներսիսեան Հայոց հոգեոր դպրոցը

կարգ դպրոցներ: Տեխնիքական, ինժիներական, առևտրական, այգեգործական, արհեստաւորաց, իւնկերական, կադեսների, ֆելդշերական, երաժշտական, նկարչական, ձեռագործի և այլ դպրոցներ և կուրսեր (դասնըթացներ):

Ներսիսեան Հայոց հոգեոր դպրոցը հիմնել է հայրենասէր Ներսէս հինգերորդ կաթողիկոսը 1822 թւի փետրվարի 7-ին, երբ նա դեռ եպիսկոպոս էր: Դպրոցի կառուցման անդրանիկ

նւէրը տւել է Սարգիս Լոռիս-Մելիքեանը... Դպրոցի ապահովութեան համար հեռատես հիմնադիրը շինել է տալիս 32 խանութ, որոնցից ստացած եկամուտը յատկացնում է դպրոցին: Այնուհետև հայ ժողովրդի նւէրներով աւարտում է դըրոցի շէնքը, որ նատում է 40,000 ռուբլի և լինում է քաղաքի ամենագեղեցիկ շէնքը: 1824 թւի գեկտեմբերի 1-ին պաշտօնապէս բացւում է Ներսիսեան դպրոցը, որ մինչև օրս գոյութիւն ունի: Այդ դպրոցը շատ պիտանի անդամներ է տւել Հայոց ազգին, Այժմ Ներսիսեան դպրոցն ունի իր նոր, հոյակապ շէնքը, որը կառուցւել է բարերար Աղէքսանդր Մանթաշեանի ծախսով:

Պօլիտեխնիկում.—1914 թւին, մայիսի 4-ին, Նաւթլուղ քաղաքամասում հիմքը ձգւեց Կովկասի առաջին պետական բարձրագոյն դպրոցի, որը կոչւում է Պօլիտեխնիկում:

Հիմքի առաջին քարը դրեց Կովկասի Փոխարքան՝ Կոմս Վորոնցով-Դաշկովը: Այդ բարձրագոյն դպրոցի բանալու իրաւունքը ստացւել է յիշեալ Փոխարքայի անմիջական ջանքերով: Իր սիրած այդ դպրոցի շինութեան համար Կոմսը նւիրել է մի խոշոր գումար՝ հարիւր հազար ռուբլի: բուն շէնքի կառուցումը նստելու է մի միլիոն երեք հարիւր հազար ռուբլի (1,300,000): Դպրոցը կը կառուցւի և կը պահպանւի Կովկասի քաղաքների հաշուվ: Այդ դպրոցը Կովկասի համար մի մեծ բարիք է, որովհետև բարձրագոյն ուսում ստացողների թիւը մեր երկրում հետզհետէ կը շատանայ:

Բացի յիշեալ դպրոցներից՝ քաղաքն էլ իր հաշուվ պահում է մի շարք քաղաքային դպրոցներ: Հայոց եկեղեցիներն էլ իրենց դպրոցներն ունեն, որ ծխական դպրոցներ են կոչւում:

Թատրոններ.—Արքունական, Արտիստական, Վրաց ազնւականների և մի ժողովրդական առևտնական դուրս Զուրալովի անունով:

Գրադարաններ.—ընթերցարաններ, թանգարաններ և ուրիշ կրթական հիմնարկութիւններ: Թանգարաններից նշանաւոր են. Ա. Կովկասիան քանդարանը.

Այս թանգարանի նպատակն է ուսումնասիրել Կովկասը և կից երկիրները։ Այդ բանի համար առ առաջնակարգ տեղ է բռնում Ռուսաստանում։ Նա ունի իր հարուստ գրադարանը։

Բ. Փառքի տաճար.—Հիմուած է Կովկասը նւաճելու յիշատակին։ Այսաւեզ կան պատմական արձանագլուխիւններ, թագաւորների և կովկասեան հերոսների թանգարժեք, մեծադիր պատկերներ և այլն։

Այդ թանգարաններից ջոկ՝ քաղաքում կան մանկավարժական, եկեղեցական, հաղաքային եւ գիւղանեսեական թանգարաններ ևս։

Արձաններ. — Վարանցովի, Պուշկինի, Գօգոլի, Գրիբաելովի։ Հայոց վանքի բակում գլուխում են հայոց նշանաւոր գործիչների արձանները։ Թատերագիր Գարբիկի Սունդի Քեանցի, հրապարակախոսներ՝ Աբգար Ցովհանիսնեանի, Պետրոս Սիմոնեանի և Կոստ. Խատիսեանի։

Քաղաքագլուխներ Իգմայիլեանի և Մատինեանի։ Ազգի բարերարներ՝ Մ. Սանասարեանի, որը հիմնել է կրոներու մի Սանասարեան դպրոցը։ Ա. Մանթաշեանի, որը



Վարանցովի արձանը

Ներսիսեան դպրոցի նոր շէնքից ջոկ, արել է նաև ուրիշ շատ բարեգործութիւններ։


Վանքի բակում կան նաև հետեւալ հայազգի զօրավարների արձանները։ Կոմս-նախարար Լոբիս-Մելիքեանի, Կարսի հերոսներ՝ Տէր-Դուկասեանի, Լազարեանի և ուրիշների։

Կամուրջներ. — Քաղաքի երկու մասը միմեանց հետ միացած են հետեւալ վեց կամուրջներով։ Վերայի, այս կամուրջից անցնող կառքերը վճարում են 5 կոպէկ։ Միքայէլեան, Մուխտանեան, Հալաբարէի, Մնացականեան։ Այս կամուրջից ներքե, Օթամալայի այգիների մօտ կայ մի փայտէ կամուրջ ևս, որ ծառայում է այգիների բերքը անսառուններով քաղաք բերելու համար։ սա կոչում է Էջի կամուրջ։

Հայերն ունեն առաջնորդարան, որտեղ նստում է Թիֆլիսի թեմի առաջնորդը։ Նրա իշխանութեան տակ է գտնվում Հայոց վիճակային կոնսիստորիան։ Ունեն նաև բազմաթիւ ընսկերութիւններ, ինչպէս օրբինակ՝ Բարեգործական, Թիւղատընտեսական, Հրատարակչական, Հայ գրողների, Ուսուցչական Միութիւն, Կանանց Բարեգործական Ընկերութիւն, Դրամատիքական Ընկերութիւն, «Նոէր Մանուկներին Հասկեր» և հրատարակչական ընկերութիւն և ուրիշ ընկերութիւններ...

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հիմնել է 1880 թւին և կառավարութեան կողմից հաստատել է 1881 թւի յուլիսի 6-ին։ Այդ ընկերութեան բուն նպատակն է լուսաւորութիւն տարածել Կովկասի և Սնդիկովկասի հայերի մէջ և օգնել նրանց նիւթապէս։ Ընկերութեան կենարոնը գտնվում է Թիֆլիսում և ունի իր սեփական շէնքը։ Գաւառներում էլ ունի իր ճիւղերը։ Զանազան բարեգործ մարդկանց առաւ նւէրներով ընկերութիւնը Թիֆլիսում բաց է արել զբաղարան, ընթերցարան, ճաշարան, որբանոց և այլն. գաւառներում դպրոցներ և գրադարան. ընթերցարաններ։ 1911 թւին կատարեց ընկերութեան երեսնամեակը և հիմք դրւեց ուսուցչական դպրոցական Փօնդին։

Եկեղեցիներ.—Քաղաքում կան շատ եկեղեցիներ, աղօթասներ և մզկիթներ։ Հայերն ունին 24 եկեղեցի։ Մայր եկեղեցին է Վանի աւագ եկեղեցին, որի գաւթումն է գտնըւում թեմիս Առաջնորդարանը, Հայոց Կոնսիստորիան, Դուկասեանի թանգարանը և ծխական դպրոցը։ Կաթոլիկէ Ա. Աստւածածին, (Մէյդանի ու Գէորգ) եկեղեցին, որի մուտքում 1795 թւին, Աղա-Մահմէդ-Խանի արշաւանքի ժամանակ, պարսիկների ձեռքով նահատակւել է յայտնի հայ բանաստեղծ-աշուղ




Պահքի Աւագ եկեղեցին

Սայեաթ-Նօվան: 1914 թւին Հայ գրողների Ընկնըութիւնը արձան կանգնեցրեց նրա նահատակւած տեղը։ Խօջի-Վանիքը իր գերեզմանոցով, որտեղ թաղւած են մեր նշանաւոր գործիչներից շատերը։ Գրիգոր Արծրունին, Ռաֆֆին, Ծերենցը, Պուշկանը, Աղայեանը, Եկմալեանը, Ա. Քալանթարը, Ա. Զաւարեանը, Ն. Դումանը և ուրիշները։

Հիւանդանոցներ, — Միքայէլեան, Արամեան, Զինորական։ Ծերերի և երեխաների ապաստարան, Ծննդաբերական տներ, քաղաքային մի քանի հանրամատչելի բուժարաններ և այլն։

Թիֆլիսում հրատարակւում են օտար, և հայկական օրաթերթեր, ամսագրեր և այլ գրքեր։

Քաղաքի փողոցները լուսաւորւում են էլէքտրական և գազային լուսով։ Այդ փողոցներով երթևեկութիւն կատարւում է նաև կառքերով ու էլէքտրաքարշով։ Ա. Դաւթի սարը կարելի է բարձրանալ Յունիկուլերով։ Ֆունիկուլերը գործում է



Ա. Դաւթի սարը և ֆունիկուլերը

Էլէքտրական ուժով։ Այդ սարի գլխի բացւում է մի շեղ տեսարան, երևում է համարեա ամբողջ Թիֆլիսը։ Հիւսիսում երևում է Կովկասեան լեռնաշղթան իր ձիւնապատ գագաթներով. աչքի է ընկնում առանձնապէս Կազբէկ սարը։

11. ՀԱՂՈՐԴԱԿՑԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Թիֆլիսը, իբրև կենդրոնական քաղաք, զանազան տեսակ ճանապարհներով հազորդակցութիւն ունի թէ իր շրջակայքի և թէ դրսի երկրների հետ։

Նա երկաթուղով միացած է Բագւի, Բաթումի, Ղարսի, Երևանի, Ջուղայի, Բորժոմի, Սուրամի, Փոթիի և Քութայի-

սի հետ: Նոր է շինած կախեթի երկաթուղին: Թիֆլիսից Բալաջարի վրայով մի զիծ էլ անցնում է դէպի Ռուսաստան: Ունի և բազմաթիւ խճուղիներ, որոնցով կարելի է գնալ Թելաւ, Սղնախ, Մանղլիս, Բելի-Կլիւչ և այլն: Կայ և մի մեծ խճուղի, որ անցնում է Կովկասեան լեռնաշղթան և հասնում է մինչև Վլադիկաւկազ, դա կոչում է Ռուսական խճուղի:

Դ. ԵՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

1. Ե Ր Կ Ի Ն Ք

Երկինքն է այն անվերջ տարածութիւնը, որտեղ գտնուում են արեգակը, լուսինը և անթիւ ու անհամար աստղեր ու մամոլորակներ:

Երկրի վրայ ամեն աեղ երկինքն կամարածե երկում է մեր գլխի վերել. այդ աստծառով երկնքին առում են երկու սակամար: Երկինքը բաց կապոյտ գոյն ունի:

2. ԱՐԵՒԼ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Արեւը մի հրեղէն լուսատու գունդ է: Նա մեզանից շատ ու շատ հեռ է: Եթէ կարողանանք ժամը 60 վերսա գնալ, 300 տարում կը հասնենք նրան:

Արեւը մեր երկրից $1\frac{1}{2}$ միլիոն անգամ մեծ է, բայց փոքր է երկում, որովհետեւ շատ հեռու է մեզանից:

Արեւը մեզ տալիս է լոյս և տաքութիւն: Առանց արեւի երկրի վրայ ապրել չէր կարելի, կը մեռնէին բոյսերը, կենդանիներն ու մարդիկ:

Արեւը ծագում է առաւօտը, կէս օրին գտնուում է մեր գլխի վերել, երեկոյեան մայր է մասում: Արեւի այս շարժումը կոչում է տեսաների շարժում:

3. ՀՈՒՍԻՆԸ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Լուսինը մի գնդածե երկնային մարմին է: Նա սեփական լոյս չունի. իր լոյսը ստանում է արեգակից և գիշերը լուսաւորում է երկիրը:

Լուսինը մեր երկրից այնքան էլ հեռու չէ: Եթէ կարողանանք մի ժամում գնալ 50 վերսա՝ մի տարում կը հասնենք լուսինը: Նա մեր երկրից 50 անգամ փոքր է:

Լուսինը գանագան ժամանակ զանազան ձևերում է: Երբ նրա առաջին մասն է երկում մանգակածե, այդ ձեր կոչում է առաջին բառուրդ: Արոշ ժամանակից յետոյ էլ երկում է ամբողջովին շրջանածե: այդ ձեմն էլ կոչում է լուսնի լուսնի: Մի ուրոշ ժամանակակից յետոյ էլ երկում է նրա վերջին մասը՝ դարձեալ մանգակածե, դա էլ կոչում է վերջին բառուրդ:


Լուսնի լուսնի

Վերջին քառորդից յետոյ մի քանի օր լուսինը անհետանում է, այդ ժամանակամիջոցն էլ կոչում է ծնունդ լուսնի:

Լուսնի այս ձևագործութիւններին առում են լուսնի փոփոխութիւնն: Լուսինն էլ արեւի նման դռւս է գալիս, անցնում է երկնակամարով և մայր է մասում հակառակ կողմում: Այդ շարժումն էլ կոչում է լուսնի տեսաների շարժում:

4. ԱՄՑՂԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Բացի արեգակից և լուսից երկում են բազմաթիւ գնդածե փայլուն մարմիններ, որոնք կոչում են աստղեր: Նրանցից շատերը արեւից էլ մեծ են, բայց որովհետեւ չափազանց հեռու են գտնուում, մասն են երկում մեզ:



Երկնքում միշտ էլ աստղեր կան, բայց ցերեկը չեն երևում, որովհետեւ արեկի լոյսը խանգարում է: Աստղերը փոփոխում են իրենց տեղերը, բայց իրարից չեն հեռանում: Այդ շարժումը կոչում է աստղերի տեսանելի շարժում:

5. ՄԹՆՈՂՈՐՏԱՑԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ ԵՒ ԵՐԻՈՅԹՆԵՐ

Երկիրը շրջապատած է օդով: Օդի այդ ամբողջ շերտը կոչում է մթնոլորտ: Նա ունի 300 վերստ հաստութիւն: Առանց օդի չեն կարող ապրել ոչ մարդիկ, ոչ կենդանիներ և ոչ էլ բոյսեր:

Մառախուղ.—Արեկի տաքութիւնից ջուրը գոլորշիանում է և տարածում օդի մէջ: Տաք եղանակին մենք չենք տեսնում այդ գոլորշին: Երբ արեկը մայր է մանում, գետինը և օդը սառչում են, այդ գոլորշիները սղմւում են և դառնում են մառախուղ, որ մենք աչքով տեսնում ենք: Մառախուղը ծխի նման ծածկում է գետինը:

Ամպ.—Նոյն ձեռվ էլ, երբ երկրի ջրերի գոլորշիները բարձրանում, հասնում են օդի աւելի ցուրտ շերտերին, նրանք այնտեղ սառչում, խտանում են և դառնում ամպ: Ամպը բաղկացած է ջրի շատ մանրիկ կաթիներից:

Յօղ.—Ամառը, երբ տաք օրին հետեւում է ցուրտ գիշերը, գետինը սառչում է և ջրի գոլորշիները օդի ցածր շերտերից կաթիների նման նստում են գետին ու նրա վրայ եղած առարկաներն: Օդից իջած այդ կաթինները կոչում են ցօղ:

Անձեւ.—Զրի այդպիսի կաթիներ, եթէ թափւում են օդի վերին շերտերից, ամպերից, կոչում են անձեւ: Անձրկ գալիս է այն ժամանակ, երբ բազմաթիւ կաթիներ միանում են իրար հետ, դառնում են աւելի մեծ կաթիներ և ծանրութիւնից թափւում են ցած:

Եղեամ.—Երբ օդի ստորին շերտերի գոլորշիները սաստիկ ցրտերից սառչում են, թափւում են ու բարակ քողով ծածկում գետինը, դրան ասում են եղեամ:

Զիւն.—Իսկ երբ սառոծ գոլորշին ամպերից է թափւում, դրան ասում են ձիւն: Առհասարակ ձիւնը գալիս է սաստիկ ցուրտ եղանակին՝ ձմեռը:

Կարկուտ.—Ամառը, երբ օդի վերին շերտերը յանկարծ սաստիկ ցրտում են, անձրեկի կաթիները սառչում են ու դառնում կարկուտ: Յօղը, անձրեկը, եղեամը, ձիւնը և կարկուտը աեղում են մթնոլորտից և կոչում են մթնոլորտային տեղումներ.

Կայծակ.—Ամառը անձրեկի կամ կարկուտի ժամանակ ամպերը յաճախ որոտում են: Որոտի ժամանակ փայլատակում է մի կրակը, որ կոչում է կայծակ: Կայծակը էլեքտրական մի կայծ է, որ ընկնում է կամ մի ամպից միւս ամպի վրայ կամ գետնին:

Որոտը լսում է փայլակը երևալուց յետոյ, որովհետև յօյսը ձայնից շուրջ է հասնում մեզ:

Ե. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԶ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

1. ՀՈՐԻԶՈՆ ԿԱՄ ԱՉՔԻ ՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆ

Երբ մենք կանգնում ենք բաց դաշտում և դիտում ենք մեր չորս կողմը, մեզ այնպէս է երեսում, թէ երկինքը մի շրջանաձև գծով միանում է երկրի հետ: Այդ շրջանաձև գիծը կոչում է հորիզոն:

Մեզ թւում է, որ եթէ մեր կանգնած տեղից առաջ գընանք՝ կը հասնենք երկինքը երկրի հետ միացնող գծին, հորիզոնին: Բայց որքան առաջ ենք գնում, չենք հասնում նրան և նորից բացւում են մեր առաջ նոր ու նոր հորիզոններ:


Սարի գագաթից դիտելիս՝ մեր աչքը տեսնում է աւելի հեռուն և հորիզոնի գիծը աւելի է մեծանում: Չորից դիտելիս՝ հեռուն չենք տեսնում և հորիզոնը աւելի է փոքրանում: ու այսպէս միշտ՝ երբ փոփոխում ենք մեր տեղը, հորիզոնն էլ փոխում է: Ուրեմն հորիզոնը փոփոխական է:

Հորիզոնից գէն մեր աչքը ոչինչ չի տեսնում, հէնց դրա համար էլ հորիզոնին ասում են նաև աչքի տեսողութեան սահման:

Հորիզոնը նկարելիս հիւսիսը միշտ նշանակում են վերեր, հարաւը՝ ներքեր, արևելքը՝ աջ կողմը, իսկ արևմուտքը՝ ձախ:

2. ՀՈՐԻԶՈՆԻ ԿԱՄ ԱՇԽԱՌՀԻ-ԿՈՂՄԵՐԸ

Հորիզոնը ունի չորս կողմ: Այն կողմը, որտեղից արևն է ծագում, կոչում է արևելիք: Արևելքի հակառակ կողմը, ուր արևը լինում է կեսօրին՝ կոչում է հարաւ: Հարաւի հակառակ կողմը կոչում է հիւսիս: Այս չորս կողմերը համարում են աշխարհի գլխաւոր կողմեր:



Երբ յայտնի է մեզ հորիզոնի մի կողմը, նրա օգնութեամբ կարող ենք գտնել հորիզոնի միւս կողմերը: Եթէ երեսներս դարձնենք գէպի արևելք՝ մեր ետեի կողմը կըլինի տրեմուտք, աջ կողմը կըլինի հարաւ, իսկ ձախ կողմը՝ հիւսիս:

Բացի յիշեալ չորս գլխաւոր կողմերից, հորիզոնն ունի և ուրիշ չորս կողմ: Հիւսիսի և արևելքի մէջտեղը գտնուած


կողմը կոչուում է նիւսիս-արեւելիս կողմ: Հարաւի և արեւելքի մէջտեղինը՝ նարաւ-արեւելեան կողմ: Հիւսիսի և արեւմուտքի մէջտեղինը՝ նիւսիս-արեւմելեան, իսկ հարաւի և արեւմուտքի մէջտեղինը՝ նարաւ-արեւմելեան: Հորիզոնի այս չորս կողմերն էլ կոչուում են երկրորդական կողմեր:

3. ԿՈՂՄԱՑՈՅՑ — ԿՈՄՊԱՍ

Ինչպէս տեսանք, հորիզոնի կամ աշխարհի չորս կողմը գտնում են արեւի միջոցով. բայց միշտ արեւի վրայ յոյս դնել չի կարելի, որովհետեւ ամպամած օրերին արև չի լինում:

Գիտնականները հնարել են մի գործիք, որ ամեն ժամանակ և ամեն տեղ ցոյց է տալիս երկրի կողմերը: Այդ գործիքը կոչում է կողմնացոյց կամ կոմպաս:

Կողմնացոյցը ժամուցոյցի նման մի գործիք է: Նրա մէջ ցցւած է մի ասեղ: Այդ ասեղի ծայրին հապցրած է մի սլաք, որի ծայրից մէկը մազնիսացրած է: Այդ սլաքը այնպէս է դրւած, որ կարող է ազատ շարժւել ամեն կողմ:



Սլաքի մազնիսացրած ծայրը սովորաբ սկ կամ կապոյտ են ներկում: Այդ ծայրը միշտ նայում է գէպի հիւսիս, իսկ հակառակ ծայրը, գէպի հարաւ: Կողմնացոյցի երեսի վրայ նշանակւած են տառեր, որոնք ցոյց են տալիս երկրի գլխաւոր և երկրորդական կողմերը: Որքան շրջենք ոլաքը՝ զերջ ի վերջոյ նրա ներկած ծայրը կընալի գէպի հիւսիս: Սլաքի միջոցով գտնելով հիւսիսային կողմը, գտնում են և միւս կողմերը:

4. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յամաքի երեսը՝ մակերևոյթը, ամեն տեղ միատեսակ չէ. մի տեղ հարթ է, մի տեղ դար ու փոս, մի տեղ նա բարձրանում է, մի ուրիշ տեղ ցածրանում:

Հարթութիւն.—Յամաքի հարթ ու հաւասար մակերևոյթը կոչում է հարթութիւն կամ հարթավայր:

Սարահարթ.—Հարթութիւն կայ, որ ծովի մակերևոյթից հարիւր սաժէնից աւելի բարձր է. այդպիսի հարթութիւնը կոչում է սարահարթ, բարձր—հարթութիւն կամ բարձրավանդակ:

Ստորահարթ.—Հարթութիւն կայ, որ ծովի մակերևոյթից բարձր է մինչև հարիւր սաժէն, այդպիսի հարթութիւնն էլ կոչում է ստորահարթ, ցածր—հարթութիւն կամ դաշտավայր:

Անապատ.—Անջուր ու անպտուղ աւազոտ հարթութիւնը կոչում է անապատ.

Բլուր.—Կէս վերստից պակաս բարձրութիւնը կոչում է բլուր:

Լեռուն.—Կէս վերստից աւելի բարձրութիւնը կոչում է լեռուն կամ սար, Սարի ներքեխ մասը կոչում է ստորոտ կամ փէս, միջին մասը՝ լանջ կամ կող, վերին մասը՝ գագար կամ գլուխ:

Լեռնաշղթայ.—Սարերերի շարքը կոչում է լեռնաշղթայ: Առանձին առանձին կանգնած լեռները կոչում են լեռնազագարներ: Միմեանց զուգահեռական լեռնաշղթաները կոչում են զուգընթաց լեռնաշղթաներ, իսկ միմեանց կտրող լեռնաշղթաները կազմում են լեռնահանգույցներ: Լեռներով հարուստ երկիրը կոչում է լեռնաշխարհ:

Հովիս.—Սարերի կամ լեռնաշղթաների ստորոտներում եղած հարթութիւնը, ուր սովորաբար ջուր է հոսում, կոչում է հովիս: Նեղ և խոր հովիտը կոչում է ձոր:

Կիրճ.—Շատ նեք ձորը կոչում է կիրճ:

5. Գ Ե Տ

Անձրիկի և ձիւնի հալւած ջրերի մի մասը գոլորշիանում է, մի մասն էլ ծծում է գետնի մէջ:

Ծծւած ջուրը երբեմն գետնի մէջ հանդիպելով որևէ արգելքի՝ դուրս է բղանում, այդ ջուրը կոչում է աղբիւր: Աղբիւրների ջրերը միանում են իրար հետ և կազմում են առակիներ, առանձիներ՝ առանձիներ: Առուները դառնում են թէ գետակներ և թէ գետերի վտակներ: Վտակները միանալով կազմում են գետեր:

Ակունք.—Գետի սկիզբն առած տեղը կոչում է ակունք:

Գետաբերան.—Այն տեղը, որտեղ գետը թափւում է մի ուրիշ գետի կամ ջրի մէջ, կոչում է գետաբերան:

Տաշտակամ.—Այն ճամփան, որով հոսում է գետը, կոչում է տաշտակամ:

Ավի.—Գետը ունի երկու ափ՝ աջ և ձախ: Երբ երեսներս դարձնենք այն կողմը, ուր հոսում է գետը, մեր աջ կողմը կըլինի գետի աջ ափը, ձախ կողմը՝ ձախ ափը:

Վտակ.—Այն հոսող ջուրը, որ թափւում է որևէ գետի մէջ, կոչում է վտակ:

Զրվէծ.—Բարձր տեղերից ներքեւ թափւող ջրերը կազմում են ջրվէծ:

6. ԼԻՃ ԵՒ ԾՈՎ

Երկրագնդի վրայ ջուրը երեք անգամ շատ է ցամաքից:

Լիճ.—Ջրով լցւած բնական մեծ փոսը կոչում է լիճ: Լճերի մեծութիւնն ու խորութիւնը միշտ տարբեր են լինում: Գետերի ջրերը համարեա միշտ քաղցր են, իսկ լճերի ջրերը մեծ մասամբ դառը և աղի:

Ջրերի ահագին տարածութիւնը կոչում է ովկիանոս: Ովկիանոսը մաշելով ցամաքի ափերը տեղ-տեղ մտնում է նրա

մէջ և գոյացնում ծով, ծոց, նաւահանգիստ, խորշ, ջրանցք,
նեղուց:

Ծով.—Ովկիանոսի այն մասը, որ մեծ չափով մտնում է
ցամաքի մէջ, կոչւում է ծով: Ծովերի ջրերն էլ դառնաղի են:

Ծոց.—Ովկիանոսի այն մասը, ո փոքր չափով է մտնում
ցամաքի մէջ, կոչւում է ծոց: Ծոցեր կազմում են նաև ծո-
վերն ու լճերը:

Նաւահանգիստ.—Այն փոքր ծոցը, որտեղ ալեկոծութիւն
չի լինում և որտեղ կանգ են առնում նաւերը, կոչւում է նա-
ւահանգիստ: Այդպիսի ծոցերի մօտ շինւած են լինում քա-
ղաքներ:

Նեղ ծոցը կոչւում է խորշ կամ զոգ: Զբի այն լայն շեր-
տը, որ միացնում է երկու ծովեր միմեանց հետ, կոչւում է
ջրանցք: Նեղ ջրանցքը կոչւում է նեղուց:

7. ԲԱՐԵԽԱՌՈՆՈՒԹԻՒՆ.

Երկրագունդը շրջապատւած է օդով: Օդը թափանցիկ է,
թեթև և գոյն չունի: Օդի շարժւելուց առաջանում է քամի:

Արևի ճառագայթներն ազատ կերպով անցնում են օդի
միջով և համարեա չեն տաքացնում նրան, այլ տաքացնում են
երկրի մակերևոյթը: Օդն իր տաքութիւնը ստանում է զիսա-
ւորապէս այդ տաքացած երկրի մակերևոյթից: Որքան օդը եր-
կրի երեսից արձր լինի, այնքան նա քիչ տաքութիւն կստա-
նայ և ցուրտ կը լինի. այդ պատճառով էլ օդի ներքին շերտե-
րը տաք են, վերին շերտերը՝ ցուրտ: Եւ այս-
պիսով օդը լինում է ցուրտ և տաք:

Արեգակը, երբ բարձր է լինում երկնքի
վրայ, աւելի է տաքացնում երկրը, իսկ երբ
ցածը՝ քիչ է տաքացնում: Այդ պատճառով էլ
կէսօրին աւելի տաք է լինում քան երեկոյեան
ու առաւտը:

Օդի ցրտութիւնն ու տաքութիւնն իմանում



Հերմաչափ.

ենք մի գործիքով, որ կոչւում է ջերմաչափ (*տերմոմետր*):
Օդի ցրտութեան և տաքութեան չափը կոչւում է բարեխառ-
նութիւն: Օդի ստորին շերտերն աւելի ծանր են՝ քան վե-
րին շերտերը: Օդի ծանրութիւնը չափում են մի գործիքով,
որ կոչւում է ծանրաչափ (*բարոմետր*):

8. Կ Լ Ի Մ Ա.

Ինչպէս տեսանք, երկրն իր տաքութիւնը ստանում է արևից:
Որքան արևը բարձր է լինում երկնքի վրայ, այնքան շատ է
տաքացնում երկրը: Ամառն արևը աւելի բարձր է լինում քան
ձմեռը, այդ պատճառով էլ ամառն աւելի տաք է լինում եր-
կրի երեսը քան ձմեռը: Ուրեմն արևի բարձրութեան փոփոխ-
ւելուց՝ փոխում է նաև տաքութեան չափը:

Այսպիսով օդի տաքութիւնն ու ցրտութիւնը օրւայ և տար-
ւայ ամեն ժամանակ փոփոխական է երկրի վրայ: Այդ փոփո-
խութիւնը կոչւում է եղանակ: գարուն, ամառ, աշուն, ձմեռ:

Ձմեռը եղանակը ցուրտ է լինում, ամառը՝ տաք և չոր,
գարնանը և աշունը՝ խոնաւ: Տարւայ ընթացքում եղանակի
կանոնաւոր փոփոխութիւնը կոչւում է կլիմա: Եղանակը փո-
փոխական է, իսկ կլիման հաստատուն:

Ընդհանրապէս հիւսիսային երկրների կլիման ցուրտ է,
իսկ հարաւային երկիրները՝ տաք: Այն տեղերում, ուր անձ-
ւեներ քիչ են գալիս՝ կլիման լինում է չոր: Այն տեղերում,
ուր անձրեները շատ են գալիս՝ կլիման լինում է խոնաւ: Մի
խօսքով ցամաքային կլիման լինում է՝ չոր, իսկ ծովայինը՝
խոնաւ:

Զ. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ, ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՆԵՐԻ ՀԵՂԵՐԸ

1. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈՎՀՈՒԹԻՒՆ

Ինչպէս ասացինք, մարդիկ ապրում են գիւղերում և քարներում։ Գիւղի բնակիչները պարապում են գլխաւորապէտ երկրագործութեամբ և հովւութեամբ։

Այն մարդիկ, որոնք մշակում են երկրի հողը, կոչւում վարում, ունի իր մշտական բնակարանը, ապրում է գիւղերում երկրագործներ։ Երկրագործների պարապունքը կոչւում է Վկ քաղաքներում։ Զբաղւում է երկրագործութեամբ, առևտրով կրագութիւն։ Այն մարդիկ, որոնք հովւում, խնամում գանազան անասուններ, կոչւում են հովիւններ, իսկ նրանց պալմունքը կոչւում է հովութիւն։

Երկրագործները ցանում են ցորեն, գարի, հաճար, կորմիմինդ, բրինձ, բամբակ, վուշ, կանէփ, կունջուդ և այլն։ Նում են նոյնպէս բանջարեղէն՝ կարտոֆիլ, լոբի, կաղամբ, սեռ, բողկ, սոխ, սխտոր և ուրիշ կանաչեղէն։

Կան և մարդիկ, որոնք մշակում են գանազան այգին, ու պարտէզներ և ստանում են խաղող, տանձ, խընձոր, դսալոր, կեռաս և այլ մրգեր։

Հովիւնները լինում են անասնապահներ և խաճնարածն Անասնապահները պահում են խոշոր կենդանիներ՝ կով, գոմէշ և ձի։ Խաճնարածները պահում են՝ ոչխար, այծ և ա-

Հովիւնները ստանում են իւղ, պանիր, միս, բուրդ կատարտահանում են ծախելու։

Կան մարդիկ, որոնք պահում են մեղու, շերամ և զբաղւում են գիւղական կեանքին անհրաժեշտ արհեստնոր

2. ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՒ ՆՍՏԱԿԵԱՅ ԿԵԱՆՔ

Կան ցեղեր, որոնք մշտական բնակավայր չունեն։ Նրանց պահում են ձկնորսութեամբ և որսորդութեամբ, հաւաք

են նաև պտուղներ և արմատներ։ Երբ մի տեղ պակասում է այդ բոլորը, նրանք տեղափոխում են մի ուրիշ տեղ, տանելով գրենց հետ իրենց անհրաժեշտ գործիքները։ Այդպիսի ցեղերը կոչւում են քափառական ցեղեր։

Կան ցեղեր, որոնք ունեն հօտեր, ուղարկեր, ձիերի ջոկեր, եղջերուներ և այլն, նրանք իրենց անասուններին կեր գտնելու համար շարունակ չուում են տեղից տեղ։ Այդպիսի ցեղերը կոչւում են բոչւութեամբ։

Մարդկութեան մեծամասնութիւնը նստակեաց կեանք է երկրագործներ։ Երկրագործների պարապում է գիւղերում կրագութիւնում։ Զբաղւում է երկրագործութեամբ, առևտրով և զանազան արհեստներով։

3. ԱՐՀԵՍՏԱՆՈՅ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Քաղաքի բնակիչները պարապում են արհեստներով, վաճառականութիւնով և զանազան ծառայութիւններով։

Այն մարդիկ, որոնք գիտեն որևէ արհեստ, կոչւում են արհեստաւորներ։ Դրանց աշխատելու տեղը կոչւում է արհեստանոց։ Քաղաքներում լինում են զանազան արհեստանոցներ, օրինակ՝ հագուստեղէնի, կանկարասիքի, կօշկեղէնի և այլն։

Այն մարդիկ, որոնք պարապում են առևտրով, կոչւում են առևտրականներ կամ վաճառականներ։

Իսկ այն մարդիկ, որոնք պարապում են որևէ ծառայութեամբ, կոչւում են ծառայողներ, օրինակ՝ աստիճանաւորները, զինւորականները և ուրիշ պաշտօնեաններ, որոնք ծառայում են զանազան հիմնարկութիւններում։

Կան և բազմաթիւ ծառայողներ, որոնք կոչւում են բանուրներ։ Բանուրների գործ անելու տեղը կոչւում է գործարան։

Քաղաքներում լինում են շատ գործարաններ, օրինակ՝ կաշուի, սապնի, իւղի, բըդի, լուցկու, շաքարի, թղթի, ապակու, ճոթի և այլն։

4. ԱՐԴԻՒԽԱԲԵՐՈՒԹԻՆ ԵՒ ԱՐԴԻՒԽԱԴՈՐԾՈՒԹԻՒՆ

Ամեն մի երկիր մեծ կամ փոքր չափով արտադրում է զանազան հում նիւթեր, օրինակ՝ բուրդ, բամբակ, հացահատիկ, մորթի, փայտ և այլն։ Երկրի այդ արտադրութիւնը կոչւում է արդիւնաբերութիւն։

Ստացած հում նիւթերից զանազան արհեստանոցներում ու գործարաններում պատրաստում են այլ և այլ ապրանքներ։ Պատրաստի ապրանքների արտադրութիւնը կոչւում է արդիւնագործութիւն։ Արդիւնաբերութեան և արդիւնագործութեան հետ զարգանում է և երկրի առուտուրը։

5. ՆԵՐՄՈՒԾՈՂ ԵՒ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԱՌՈՒՏՈՒՐ

Կան երկիրներ, որոնք չեն ունենում ապրուստի անհրաժեշտ նիւթեր, օրինակ՝ հացահատիկ, նաւթ և այլն։ Այդ երկիրները նման նիւթեր ստանում են դրսից։ Դրսի երկրներից ստացւած այդպիսի ապրանքի առուտուրը կոչւում է ներմուծող առուտուր։

Հնդիակառակը կան երկրներ էլ, որոնք ունենում են առատ արդիւնաբերութիւն և իրենց նիւթերը արտահանում են դրսի երկրներ։ Դրսի երկրներ ուղարկող այդպիսի ապրանքի առուտուրը կոչւում է արտահանող առուտուր։

Որքան առ լինի մի երկրի արդիւնաբերութիւնը, այնքան հարուստ կը լինի նրա բնակչութիւնը և առուտուրն էլ կը լինի զարգացած։

6. Ի Շ Խ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Իշխանութիւնը լինում է հոգեոր և աշխարհական, եկեղեցական և պետական։

Հոգեոր իշխանութիւն։ — Հոգեոր իշխանութիւնը կառավարում է ժողովրդի հոգեոր գործերը։

Հայոց հոգեոր իշխանութեան պետը կոչւում է կաթողիկոս Ամենայն Հայոց։ Նրա Հայրապետական աթոռը գտնւում է Ս. Էջմիածնում։ Կաթուղիկոսը ո. Էջմիածնի Սինօդի նախագահն է։ Նրա իշխանութեանն են ենթարկւում թեմական առաջնորդները։ Թեմական առաջնորդն էլ վիճակային կոնսիստորիայի նախագահն է։ Թեմական առաջնորդը իր թեմում ունենում է յաջորդութիւն, որի կարավարիչը կոչւում է Յաջորդ։ Յաջորդը հոգեոր կառավարութեան նախագահն է։

Սինօդի, կոնսիստորիայի, հոգեոր կառավարաթեան իշխանութիւնը համարւում է եկեղեցական իշխանութիւն։

Թէ Առաջնորդի և թէ Յաջորդի իշխանութեան տակ կան մի քանի գործակալութիւններ, որոնց պաշտօնեանները հոգեորականներ են։

Իւրաքանչիւր հայ եկեղեցի ունի մի երեցփոխ և 2—4 հոգաբարձու, որոնց ընտրում են ծխականները ծխական ժողովում։ Դրանց է յանձնւած եկեղեցու և նրա դպրոցի տնտեսականի հակողութիւնը։

Հոգեոր գործերը ունեն իրենց օրէնքները։

Պետական իշխանութիւն։ — Ամեն մի գիւղ ունի մի կառավարիչ, որ կոչւում է տանուտէրի օգնական (քեօխւա, ոէս)։ Մի քանի գիւղեր, որ միասին մի գիւղական հասարակութիւն են կազմում, ունեն մի ընդհանուր իշխանաւոր, որ կոչւում է տանուտէր։ Կան մեծ գիւղեր, որոնք նոյն պէս մի մի տանուտէր ունեն։ Վիճակը կառավարում է վիճակային ոստիկանը (որտակ)։ Գաւառը կառավարում է գաւառապետը, նահանգը՝ նահանգապետը։ Մեծ քաղաքներն ունենում են քաղաքապետ, քաղաքագլուխ, քաղաքային խորհուրդ՝ դումա, քաղաքային վարչութիւն, ոստիկանութիւն, ոստիկանապետ և ուրիշ իշխանաւորներ։

Մի քանի նահանգների կառավարիչը կոչւում է կառավարչապետ կամ փոխարքայ։ Մի պետութեան կամ տէրութեան գլուխը կոչւում է թագաւոր, կայսր և այլն։

7. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն հաստատութիւնները, որոնք մեզ ուսում և կրթութիւն են տալիս, կոչւում են կրթական հաստատութիւններ. օրինակ՝ դպրոց, թատրոն և այլ հիմնարկութիւններ:

Գիւղերում և քաղաքներում կան բազմաթիւ սկզբնական-տարրական դպրոցներ: Այդ դպրոցների մի մասը կառավարում է հոգեր իշխանութիւնը, միւս մասը՝ պետութիւնը: Առաջին տեսակի դպրոցները կոչւում են ծխական դպրոցներ, երկրորդ տեսակինը՝ պետական:

Բացի տարրական դպրոցներից՝ կան և միջնակարգ ու բարձրագոյն դպրոցներ: Միջնակարգ դպրոցներ են՝ հայոց թեմական դպրոցները, պետական դիմապիօնները, բէալական դպրոցներն և այլն, Բարձրագոյն դպրոցներն են բոլոր համալսարանները:

Կրթական հաստատութիւններ են համարւումնաև թատրոնը, գրադարանը, ընթերցարանը և թանգարանը:

8. Գ Ի Ւ Ղ

Գիւղերը լինում են փոքր և մեծ: Իւրաքանչիւր գիւղ ունի իր վարելահողը, արօտատեղին, այգիները, բանջարանոցներն և այլն. Գիւղի բնակիչները մեծ մասամբ պարապում են երկրագործութեամբ, հովտութեամբ, մասամբ էլ առուտուրով և արհեստով:

Վատառողջ կլիմայ ունեցող գիւղերի բնակիչները իրենց անասունների հետ ամառը զնում են եայլաղ, այսպիսի գիւղերը ամառը ամայանում են: Առողջարար կլիմայ ունեցող գիւղերը շրջակայ քաղաքների համար ծառայում են որպէս ամարանոց:

Մեծ գիւղերն ունեն իրենց եկեղեցին կամ ազօթատունը, բանկը, դպրոցը, պոստ-հեռագրատունը և ուրիշ հիմնարկութիւններ: Գիւղերն իրենց ապրանքը ծախում են հանում շրջակայ քաղաքներում:

9. Ք Ա Ղ Ա Ք

Քաղաքները նոյնպէս լինում են մեծ և փոքր: Նրանց քնակիչների մեծ մասը զբաղւում է առուտրով, արհեստով և ծառայութիւններով: Դրանց համար կան բազմաթիւ խանութներ, արհեստանոցներ և գործարաններ: Ծառայողների համար կան զանազան հիմնարկութիւններ:

Քաղաքների ապրուստը աւելի թանգ է քան գիւղերինը, որովհետև գիւղից ներմուծւող տպրանքը մինչև սպառողի ձեռքն անցնելը, անցնում է մի քանի ձեռքով:

Քաղաքներն ունենում են մեծ և հոյակապ շինութիւններ, եկեղեցիներ, թատրոններ, և ուրիշ հիմնարկութիւններ, ինչպէս օրինակ՝ պոստ-հեռագրատուններ, գորանոցներ, դպրոցներ, ընթերցաններ, գրադարաններ և այլն:

Կեանքը քաղաքներում եռում է, բնակչութիւնը ամբողջ ժամանակ իրարանցման մէջ է: Ամառները սովորաբար քաղաքների բնակչութեան որոշ մասը զնում է ամարանոց:

10. ՓՈՂՈՅ, ՀՐԱՊԱՐԱԿ, ՇՈՒԿԱՅ.


Գիւղի փողոցները լինում են սովորաբար նեղ, ծուռ ու մուռ, գիշերները մութ, անձրև ժամանակ ցեխուա և անմաքուր: Քաղաքի փողոցները լինում են սովորաբար լայն ուղիղ, գիշերները լուսաւորւած, սալայատակ և մաքուր ու երթևեկութեան համար՝ յարմար:

Քաղաքներում և գիւղերում կան ընդարձակ տեղեր՝ հրապարակներ, որաեղ սովորաբար ծախու են հանում զանազան ապրանքներ, այդպիսի տեղերին ասում են շուկայ՝ բազար: Հրապարակները սովորաբար շրջապատւած են լինում խանութներով: Հրապարակներում և շուկաներում մեծ առուտուրը առաւելապէս կատարւում է շաբաթւայ և մանաւանդ տարւայ որոշ օրերին: Այդ օրերի առուտուրը կոչւում է տօնավաճառ. ուր ծախու են հանուում ամեն տեսակի ապրանքներ:

Է. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՔԱՐՏԷԶԻ

1. ՄԵՐ ԴԱՍԱՐԾՆԸՆԸ.

Այս մեր երրորդ դասարանն ունի չորս պատ. առջևի պատ, յետևի պատ, աջ պատ և ձախ պատ: Մեր գլխի վերևը գըտնում է առաստաղը, ուսների տակ՝ յատակը: Դասարանն ունի լուսամուտներ և դռւո:



Դասարան

մեն մի առարկա դասարանում ունի իր տեղը:


2. ՆԿԱՐ ԿԱՄ ՊԱՏԿԵՐ

Դասարանը առարկաները կարելի է նկարել: Նկարել նշանակում է առարկայի տեսքն այնպէս գծագրել, որ առարկան պատկերանայ նոյնութեամբ: Այդպիսի պատկերները ցոյց են տալիս նկարած առարկայի բարձրութիւնը, լայնութիւնն ու երկարութիւնը: Այդ ձևակերպութիւնը կոչւում է նկար կամ պատկեր:

Նկարելիս գործ են ածում մատիտ, սերկ, թուղթ, քաթան և այլն: Առարկան միշտ իր իսկական մեծութեամբ չի նկարում: Ցածախ պայմանական նշաններով առարկան մեծացնում կամ փոքրացնում են:

3. ՅԱՏԱԿԱԳԻԾ ԿԱՄ ՊԼԱՆ

Առարկան նկարելուց զատ, կարելի է նկարել և նրա յատակագիծը կամ պլանը: Օրինակ. գրքի յատակագիծը նկարելիս, գիրքը դնում են մի թերթ թղթի վրա և շուրջը գծում: Գիրքը վերցնելուց յետոյ թղթի վրա մնում է նրա բռնած տեղի չորս կողմի գիծը. այդ շրջագիծը գրքի յատակագիծն է կամ պլանը: Ուրեմն յատակագիծն է առարկայի բռնած տեղը, որ ունի միմիայն երկարութիւն և լայնութիւն: Ամեն մի առարկայի բռնած տեղը կոչւում է յատակագիծ: Առարկայի յատակագիծը զանազանուում է առարկայի նկարից նրանով, որ բարձրութիւն չունի:



Գրքի յատակագիծը

Բոլոր առարկաներն ունեն իրենց յատակագիծը. օրինակ՝ ձիւնի կամ փափուկ հողի վրայ ման գալիս՝ յաճախ մնում են մեր ոտների հետքերը, որոնք և մեր ոտքերի յատակագիծն են:

4. ՅԱՏԱԿԱԳԻԾ ՆԿԱՐԵԼԸ

Եթէ ուզում են իմանալ, թէ գիրքը սեղանի վրայ ինչ տեղ է դրւած՝ չափում են սեղանի չորս եզրից մինչև գրքի շրջագիծը և այդպիսով որոշում են գրքի տեղը սեղանի վրայ: Երբ սեղանի վրայ լինում են մի քանի առարկաներ, նոյն ձեռվ գտնում են և նրանց տեղերը:

Իսկ երբ ուզում են իմանալ թէ սեղանը գասարանի ինչ տեղն է դրած, չափում են գասարանի չորս պատերից մինչև սեղանի չորս եզրը և այդպիսով որոշում սեղանի տեղը: Երբ որոշում է սեղանի տեղը, որոշում է և նրա յատակագիծը:

Մեծ առարկաների յատակագիծը նկարելիս՝ պայմանական չափով փոքրացնում են նրա չորս կողմի գծերը, որ տեղաւորւի թղթի վրայ:

5. ԳԾԱԶԱՓ ԿԱՄ ՄԱՍՇՏԱԲ

Ասացինք, որ առարկաների յատակագիծը նկարելիս, առարկան դնում են թղթի վրայ և չորս կողմից գիծ քաշում։ Բայց այդպէս կարելի է վարւել երբ առարկան փոքր է։ Իսկ երբ առարկան մեծ է ու թղթի վրայ չի տեղաւորւում, նրա յատակագիծը ուրիշ կերպ են նկարում։

Դիցուք ուզում են նկարել պահարանի յատակագիծը. պահարանը թղթի վրայ դնել չի կարելի. արշխով չափում են նրա երկարութիւնը. ասենք թէ երկարութիւնը եղաւ երկու արշին, որի չափով գիծ քաշել անյարմար է թղթի վրայ, դրա փոխարէն գծում են երկու վերշոկ հորիզոնական գիծ, ընդունելով վերշոկը մի արշին։

Յետոյ՝ նոյն ձևով չափում են պահարանի լայնութիւնը— ասենք թէ լայնութիւնն էլ եղաւ մէկ արշին. դրա փոխարէն էլ քաշած հորիզոնական գծի ծայրին գծում են մի վերշոկ ուղղահայեաց գիծ։ Յետոյ հորիզոնական գծի միւս ծայրին և մի վերշոկ ուղղահայեաց գիծ են քաշում. ապա ուղղահայեաց գծերի ծայրերը մի ուրիշ հորիզոնական գծով միացնում են. ստացնում է մի քառանկինի, որն և կը լինի պահարանի յատակագիծը փոքրացրած չափով։

Այս ձևով յատակագիծ նկարելիս, առանձնապէս ընդունում է մի պայմանական չափ. օրինակ՝ սաժէնի տեղ վերշոկ, մատնաչափ և ալին։ Սյդ պայմանական չափը կոչւում է գծաչափ կամ մասնաչափ։ Նոյն ձևով գտնում են դասարանի, դպրոցի, տան, բակի և այլ յատակագիծերը։

Յատակագիծերի մօտ միշտ նշանակում է մասշտաբն իրեն պայմանական թւերով։

6. Ք Ա Ր Տ Է Զ

Մասշտաբի օգնութեամբ նկարում են աւելի մեծ յատակագիծեր. օրինակ գիւղերի, քաղաքների, գաւառների, նահանգների, վերջապէս ամբողջ երկրագնդի յատակագիծը։ Այդպիսի

յատակագիծերը կոչւում են քարտզներ։

Որքան մեծ է լինում նկարելու յատակագիծը, այնքան էլ մասշտաբի պայմանական չափը աւելի փոքրանում է, որպէսզի հնարաւոր լինի ամբողջ յատակագիծը տեղաւորել թղթի վրայ։

Քարտէզների վրայ էլ նշանակում է մասշտաբն իրեն պայմանական թւերով, որով և իմացւում է նկարած երկրի իսկական մեծութիւնը։

Քարտէզների վրայ զանազան գոյներով նշանակում են գետերը, լճերը, ծովերը, լեռները, գիւղերը, քաղաքները և այլն։ Քարտէզներ նկարելիս սովորաբար նրա վերեկի կողմը ընդունում են հիւսիս, ներքելինը՝ հարաւ, աջ կողմը՝ արևելք, իսկ ձախ կողմը՝ արևմուտք։ Քարտէզը նկարում¹⁾ են թղթի վրայ կամ շինում են կաւից։

II ՄԵՐՉԱԽՈՐ ԲՆԱԳԱԽԱՌ

C. ԹԻՖԼԻՍԻ ԳԱԽԱՌ

1. ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Թիֆլիսի նահանգն ունի 9 գաւառ. Թիֆլիսի, Գորու, Սղնախի, Թելաւի, Թիօնէթի, Դուշէթի, Բորչալւի, Ախալցխալի, և Ախալքալաքի։

Այս գաւառներից Թիֆլիսի գաւառը Թիֆլիս քաղաքի մերձաւոր բնագաւառն է։

Թիֆլիսի գաւառի բնական սահմաններն են, արևելքից՝ Ղարայեաղի դաշտի շարունակութիւնը, հարաւից՝ Թրիալէթի սարերը, արևմուտքից՝ Վրաց-Իմերէթեան սարերը և հիւսիսից՝ Կովկասեան լեռնաշղթան։

Այս սահմանների մէջ ընկնում է մօտ 4000 քառակուսի վերստ տարածութիւն։

1) Նկարեցէք սենեակի, բակի, փողոցի, թաղի յատակագիծը։ Նկարեցէք ձեւ դրիւի, քաղաքի և նրա շրջակայքի քարտէզը։

Այդ տարածութեան վրա կան բազմաթիւ գիւղեր, որոնք կազմում են 51 գիւղական հասարակութիւն:

Գաւառի գլաւոր քաղաքն է Թիֆլիսը: Այստեղ է նստուած Թիֆլիսի գաւառի գաւառապետը:

2. ԲՆԱԳԱԽԱՌԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի գաւառի մակերեսոյթը միատեսակ չէ. միջին և արեւեան մասը—նարբավայր է, իսկ արևմտեան մասը լեռնոց է և անտառապատ:

Արևմտեան կողմը ձգւած են Վրաց-Իմերէթեան սարերը, որոնցից սկիզբն են առնուած բազմաթիւ առւակներ ու գնուած թափուած են կուր գետի մէջ:

Գաւառի հիւսիսից դէպի հարաւ, մինչև Թիֆլիս քաղաքը, ձգւած է մի հովիտ: Այդ հովիտի միջով հոսուած է կուր գետը:

Թիֆլիսից դէպի հարաւ-արեւելք այդ հովիտի շարունակութիւնը կազմուած են գաշտավայրեր, ինչպէս օրինակ Ղարայեազի ընդարձակ գաշտավայրերը, որոնք այս գաւառի ամենացած տեղերն են:

3. ԲՆԱԳԱԽԱՌԻ ԿԼԻՄԱՆ

Թիֆլիսի գաւառի կլիման մակերեսոյթի կազմութեան պատճառով նոյնպէս բաժանուած է երկուսի.—ցամաքային և խոնաւ:

Գաւառի արեւեան կողմն ունի ցամաքային կլիմա: Այդ կողմը բաց է Ղարայեազի տաք քամիների առաջ, որ չորացնուած են այդ մասի օդը:

Գաւառի արևմտեան կողմն ունի խոնաւ կլիմա: Այդ կողմի անտառապատ լեռներից գաւառն են մտնուած խոնաւ քամիներ և օդը խոնաւացնուած:

Կովկասեան լեռնաշղթան փակուած է հիւսիսային սառը քամիների առաջը, այդ պատճառով, ինչպէս Թիֆլիսի նահանգի, այնպէս էլ Թիֆլիսի գաւառի կլիման ընդհանրապէս տաք է:

4. ԶՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԼԵՌՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ասել մի երկրի ջրագրական պայման, նշանակուած է ասել թէ մի երկրը ինչ յարմարութիւններ ունի ջրւելու: Իսկ ասել մի երկրի լեռնագրական պայման, պէտք է հասկանալ թէ երկրի լեռներն ինչպէս են դասաւորւած և ինչ յարմարութիւններ են տալիս ջրերի միանալուն:

Թիֆլիսի գաւառի արևմտեան լեռնոտ մասը լաւ չէ ջրւում, իսկ արևելեան գաշտավայր մասը գրեթէ անջուր է: Այդ մասի մի քանի գետերի հովիտները միայն պտղաւէտ են, օրինակ Կուրի հովիտը, որովհետև ջրւում են:

Ադ պատճառով էլ Թիֆլիսի գաւառի արևելեան գաշտավայր մասը համարեա թէ զուրկ է բուսականութիւնից: Իսկ արևմտեան մասի ջրագրական պայմանները թէկ անբաւարար են, բայց խոնաւ կլիմայի պատճառով աւելի հարուստ են բուսականութիւնով:

5. ԲՆԱԳԱԽԱՌԻ ԲԵՐՔԸ

Ինչպէս Թիֆլիսի գաւառի մակերեսոյթն ունի տարբեր կազմութիւն, այնպէս էլ նրա հողն ունի տարբեր յատկութիւն: Հողի տարբեր յատկութեան պատճառով գաւառի բերքն էլ տարբեր է,

Վրաց-Իմերէթեան և Թրիալէթեան սարերը մեծ մասամբ անտառապատ են երկրագործութեան համար անպէտք. իսկ հարթավայրերը մեծ մասամբ անջուր են ու անբերի: Այս պատճառով էլ գաւառի բերքը անբաւարար է: Գաւառը հառուստ է միայն բամբակի ցանքսերով: Հովիտներուած հողը մշակւուած է, ստացւած բերքը՝ զանազան հացահատիկներ, մրգեր, կանաչեղին և այլն, թէկ քիչ են լինուած, բայց լաւ տեսակի: Այդ բերքը մեծ մասամբ ներմուծւուած է Թիֆլիս:

6. ԲՆԱԳԱԿԱՌԻ ԱՐԴԻՒԽՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տեսանք Թիֆլիսն գաւառից քիչ բերք է ստացւում, այդ պատճառով էլ գաւառի արդիւնագործութիւնը անշան տեղ է բռնում։ Թիֆլիս քաղաքում միայն կան զանազան գործարաններ, որոնք թէ գաւառից և թէ դրսից ստացած հում նիւթերից շինում են պատրաստի ապրանքներ, օրինակ՝ բրդից—թաղիք, ճարպից՝սապոն, մորթուց՝ կաշի և այլն։

7. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱԶԳՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՐՈՆԸ

Թիֆլիսի գաւառը եղել է վրաստանի մի մասը։ Հին ժամանակներից սկսած այդ գաւառում ապրել են վրացիներ։ Այսօր էլ նրա բուն բնակիչները համարւում են վրացիները, իբրև տեղացիներ։

Բացի վրացիներից, գաւառում բնակութիւն են հաստատել նաև հայերը, որոնց մեծ մասը վրացախօս են։ Նրանցից շատերը ապրում են վրացիների հետ նոյն-իսկ միևնույն գիւղում։ Կան նաև թուրքեր, ոռուներ և այլն։

Գաւառի բնակիչներից վրացիները կրօնով ոռուսագաւան են, հայերը՝ լուսաւորչական, թուրքերը՝ մահմեդական։ Սրանք բոլորն ունեն իրենց եկեղեցիներն ու ազօթատները։ Բացի բուն բնակիչներից, եկուրները, օր. գերմանացիները, համարւում են գաղթականներ։

8. ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ԳԻՒՂԵՐԸ

Թիֆլիսի գաւառի գլխաւոր քաղաքը Թիֆլիսն է։ Գաւառապետը նատում է Թիֆլիսում։ Բացի Թիֆլիսից գաւառում ուրիշ քաղաք չը կայ։ Կան բազմաթիւ մեծ ու փոքր գիւղեր և ամարանոցներ, որոնցից աչքի են ընկնում հետեւաները։

Ա. Կ Ա Զ Ա Ր

Կոջորը գանւում է Թիֆլիսից գէպի արևմուտք։ (Ունի 4940 ոտնաչ սկալ ութիւն) Թիֆլիսից հեռու է 18^{3/4} վերսա։ Սա ամարանոց է, ձմեռը բնակիչներ չեն լինում։ Կիման առողջարար է, մանաւանդ երեխան երի համար։

Կոջորը հին ժամանակ եղել է վրաց թագաւորների ամարանոց։ Սրս մօտ մի անտառապատ սարի վրայ գտնում է Քեօւ-օղլու ամրոցը, որ գրաւում է հետաքրքրւողների բազմութիւն։ Կոջորի մօտ գտնում է նաև Ուձո անունով մի վրացական վանք։ Կոջորից ցած գտնում են Ծաւկիս, Օքողանա, Տարախմելա գիւղերը, որոնց ջուրը պակաս է և որոնք զուրկ են բուսականութիւնից։

Բ. Ֆ Ա Ն Ե Թ

Թիֆլիսից գէպի արևմուտք, 7 վերսաի վրա, իշխան Բէհըուղեանների կալւածքում գտնում է Ծղնէթ գիւղը։ Ունի մօտ 270 ուռւն բնակիչ, որի մեծ մասը վրացախօս հայեր են։ Ծղնէթն ունի համեմատաբար զով օդ։ Թիֆլիսից շատերը գընում են այդտեղ ամարանոց։ Ծղնէթին մօտ է Լիս գիւղը, որ գտնում է Կուր գետի աջ ափին և հեռու է Թիֆլիսից 13 վերսա։ Լիսի մօտ կայ մի լճակ։ Բնակիչներն են հայեր և վրացիներ։

Գ. Մ Ա Ն Գ Ի Ւ Ս

Մանզլիսը գտնում է ի Փլիսի արևմտեան կողմը, մօտ 60 վերսաի վրայ։ (Ունի 3980 ոտն. բարձրութիւն) Բնակիչներն են մեծ մասամբ ոռուներ և հայեր։ Գիւղի շուրջը գտնում են սոճուանտառներ, գրա պատճառով Մանզլիսը լաւ ամարանոցներից մէկն է համարւում։ Սրանից երկու վերսա հեռու, Ալգէթի ձախ ափին, շինւած է Հին-Մանզլիսը. իսկ Մանզլիսից 7 վերսաի վրայ Թօնէթ գիւղը։ Հին Մանզլիսում կայ մի վանք, որ շինւած է երրորդ գարի վերջերին և շրջապատւած է հաստպապով։

Սա եղել է վրացական նշանաւոր վանք։

Գ. Բ Է Լ Ի Ա Լ Ի Ւ Զ

Բելի-կլիւչը գտնւում է Թիֆլիսից դէպի հարաւ-արևմուտք,
55 վերստ հեռաւորութեան վրայ: Տեղական լեզուվ կոչւում է
Ալբուլադ: Սա ունի (4110 ոտնաչափ բարձրութեան) առողջարար օդ
և լաւ ջուր: Շուրջը գտնւում են անտառներ: Բնակիչները
ուսունեն են և հայեր: Ամառը այստեղ շատերը ամարանոց են
գալիս:

Եօթ վերստի վրայ գտնւում է մի հին վանք, որ կոչւում
է Զելեօնի մօնասիր. իսկ երեք վերստի վրայ Շամշուլդա
հայաբնակ գիւղը, որ հին ժամանակ եղել է վրացոց քաղաք:
Սրա մօտ, Խրամ գետի ձախ ափին, մի անառիկ տեղ գտնւում
են հին աշտարակների, ամրոցների, վանքերի մասցորդներ:
Շամշուլդայի մօտերքը գտնւում են Դաղեթ-խաչէն, Դուրնուկ
և Բոլինիս-խաչէն հայաբնակ գիւղերը: Բոլինիս-խաչէնն էլ Թիֆ-
լիսից հեռու է 60 վերստ, ունի մի հին վանք, ուր յաճախում
են ուխտաւորներ: Սա մեր յայտնի զբող Ղազարոս Աղայեանի
ծննդավայրն է:

Ե. Ս Ս Գ Ս Ր Ե Զ Օ

Սագարեջօն գտնւում է Թիֆլիսից դէպի արևելք՝ 50 վերստ
հեռաւորութեան վրայ և ընկնում է Կուր գետի ձախակողմեան
վտակի՝ Եօրա գետի ձախ կողմը, Սղնախի և Թելաւի մէջ:
Նա այժմ համարւում է Կախէթի երկաթուղու կայարաններից
մէկը. սակայն Թիֆլիսից Սագարեջօ երթեկութիւնը կատար-
ւում է նաև հանրակառքերով: Դիւղի գիրքը անառիկ է և ան-
մատչելի: Երեք կողմից շրջապատած է պերճ լեռներով և խիտ
անտառներով: իսկ մի կողմից բաց է և միանում է Եօրա գետի
հովտի հետ:

Բնակիչները կազմում են վրացիները և հայերը. կան և
փոքրաթիւ ուսուներ ու հրէաներ: Բնակիչները պարապում են
զլիստորապէս երկրագործութեամբ, այգեգործութեամբ, գինե-
գործութեամբ, փայտահատութեամբ և անամնապահութեամբ:
Ունի բազմաթիւ հնութիւններ՝ աւերակ բերդեր և եկեղեցիներ,
վարքեր և վրաց իշխանների գամբարաններ:

Զ. Մ Ա Ր Տ Դ Ո Բ

Թիֆլիսից դէպի հեռսիս արևելք, 20 վերստի վրայ, գտըն-
ւում է Մարտոր գիւղը, որ ունի խաղողի բազմաթիւ այգիներ,
զբուավայրեր ու աղբիւրներ: Մարտորի մօտ գտնւում է
ս. Անտօնի վանքը, որ տեղական լեզուվ կոչւում է Խորեքա:

Մարտորից դէպի հիւսիս արևելք, մօտ 40 վերստի վրայ
գտնւում է Քոմբոր գիւղը: (Ունի 3628 ոս. բարձրութեան) Մարտորից
դէպի հարաւ գտնւում է Լիլո գիւղը, որի շրջակայքում կան
մի քանի լճակներ, ինչպէս օրինակ Օլգինսկի լճակը:

Է. Ս Խ Ճ Ս Լ Ո

Թիֆլիսից դէպի հիւսիս, 12 վերստի վրայ, Կուր գետի
ձախ ափին, գտնւում է Աւճալա գիւղը: Սա Թիֆլիսից դէպի
Բաթում ամսող երկաթուղու առաջին կայարանն է: Այդ գիւ-
ղումն են գտնւում Թիֆլիսին ջուր մատակարարող ջրամբար-
ները:

Աւճալային մօտ է Գլդան գիւղը, որտեղ վրացիների հետ
խառը ապրում են վրացախօս հայեր: Գլդանն ունի այգիներ,
որի խաղողը պահուում է ամբողջ տարի:

Ը. Մ Ց Խ Ւ Թ

Մցիւէթը գտնւում է Արագւա և Կուր գետերի միացման
տեղը, Թիֆլիսից հիւսիս, 20 վերստի վրայ: Սա միացած է
Թիֆլիսի հետ երկաթուղով: Մցիւէթը մի ժամանակ եղել է
վրաց թագաւորների աթուանիստը: Սրա արևելեան կողմը, մի
սարի վրայ, շինւած է Զվարիս սաղդարի վանքը:

Դիւղի մէջ գտնւում է Մցիւէթի մեծ վանքը, որ հին ժա-
մանակ եղել է վրաց կաթողիկոսների աթուանիստը: Եկնւած
է չորրորդ գարում: Այգտեղ թաղւած են վրաց թագաւորներ
և կաթողիկոսներ: Այժմ Մցիւէթը փոքր գիւղ է, որա մօտ
եղած անտառում շինւած են ամարանոցներ:

Թ. Շ Բ Զ Ա Ա Ա Թ Վ Ո Ւ Մ

Թիֆլիսից դէպի հարաւարելք գտնուում է Ծաղկեվանք ուխտատեղին, դէպի հարաւ գտնուում է Թիլեթ գիւղը ո. Գէորգի ուխտատեղիով։ Նաւարադի վանքը, որ շինուած է մի բարձր սարի վրայ։ Աւելի հարաւ գտնուում են Կումիս, Բօրբայլ, Կողաև այլ գիւղեր։ Կողաև Կումիս գիւղերի մօտ գտնուում է Կումիսի լիճը։

Թիֆլիսից դէպի հարաւ արելք, Ղարայեազի դաշտերի մի մասը, ջրուում է Մարտիանեան ջրանցքով։ Ղորայազում ամառը տաքութիւնը հասնուում է 51°։ Այդուղ աճուում է բամբակի, Բնակիչները մեծ մասամբ պարսիկներ են, կան և հայեր։

9. ԲՆԱԳԱԻԱՌԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Թիֆլիսի գաւառի բոլոր բնակավայրերը հաղորդակցութիւն ունեն Թիֆլիսի հետ գոնազան ճանապարհներով։ Երկաթուղիով, խճուղիներով, սէլհարքներով, շաւիղներով։

Երթեւեկութիւնը կատարուում է ոտքով, ձիով, կառքով, սալով, երկաթուղիով և այլն։ Ամեն օր գնում-գալիս են բազմաթիւ գիւղացիներ, տուատուրականներ և ճամբորդներ։ Եկողները քաղաք են բերում իրենց գիւղերի բերքը, գնացողները գիւղ են տանում գանազան ապրանքներ։

10. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Թիֆլիսի գաւառի բնակիչները պարտապում են մեծ մասամբ։

Ա. Հաղափործութեամբ。—ցանում են բամբակ, հացահատիկներ, տնկում են այգիներ, պարտէղներ, մշակում են բանջարանցներ և այլն։

Բ. Անասնապահութեամբ。—պահում են ոչխար, տաւար, խոզ, ձի։

Գ. Արհեստներով, ծառայութեամբ եւ տնայնագործութեամբ։

Դաւառական այս բոլոր պարտապմունքները տարէց տարի գարգանում և ծաղկում են ջնորհիւ այն բանի, որ արտահանած ապրանքը սպառուում է բաղաքում։

Թ. ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԸ

1. ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Թիֆլիսի նահանգի սահմաններն են, հիւսիսից՝ Կովկասեան լեռնադիքան, արևելքից՝ Զաքարալայի վիճակը և Գանձակի նահանգի մի մասը։ Հարաւից՝ Գանձակի եւ Երևանի նահանգներն ու Կարսի ցրանը։ Արևմուտքից՝ Վրաց Իմերեկան սացերը։ Այսպիսով Թիֆլիսի նահանգի մէջ մտնում են Կովկասեան լեռնաշղթայի հարաւային լանջերը, Քուռ գետի հովտի մի մասը և Փոքր Կովկասի հիւսիս արևմտեան անկիւնը։

2. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԼԻՄԱՆ

Թիֆլիսի նահանգի հիւսիսային, արևմտեան և մասամբ հարաւային կողմերում ձգւած են մի շարք լեռնաշղթաներ, այդ պատճառով էլ նահանգի մակերեսոյթն այդ կողմերում լեռնոտ է։ Նահանգի արևելեան կողմի մակերեսոյթը համեմատաբար հարթ է։

Նահանգի կլիման գրեթէ նման է Թիֆլիսի գաւառի կլիմային։ Նահանգի մակերեսոյթը բազմազան լինելով բազմազան է և նահանգի կլիման։ Հիւսիսային լեռնոտ մասի կլիման չոր է, արևմտեան և հարաւային լեռնոտ մասերում՝ խոնաւ է, իսկ արևելեան հարթավայրերում՝ տաք է և չոր։

3. ՈՌՈՒՇՈՒՄԸ, ԲՈՅԱՐ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Թիֆլիսի նահանգը լինելով մեծ մասամբ լեռնոտ և անտառապատ, հարուստ է ջրերով։

Նահանգի երկարութեամբ հոսում է Կուր գետը իր բազմաթիւ մեծ ու փոքր վտակներով։ Դրա ձախ կողմի վտակներից նշանաւոր են՝ Լետիվա, Արագած, Խոջ և Ալագան։ Աջ կողմի վտակներից նշանաւոր են՝ Խրամ և Ալգեր։ Թէ կուր գետին

թէ իր վտակների հովիտները պաղաւէտ են: Նահանգի արևմտեան կողմը կան մի քանի լճեր:

Նահանգի բուսականութիւնն ու կենդանիները բազմազան են: Հարթավայրերում նոյն խել աճում են բամբակ ու ծխախոտ:

4. ԲԵՐՔՆ ՈՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Նահանգը իր բնական պայմանների շնորհիւ տալիս է գառազան տեսակ բերքեր: Նահանգից ստացւում են ցորեն, գարի, սիմինդ, կորեկ, բրինձ, փայտ, միրգ՝ տանձ, խնձոր, խաղող:


Խաղողի առատութեան
պատճառով՝ Նահանգի
մի քանի գաւառներում
բնակչութիւնը պարապում
է գինեգործութեամբ:

Արդիւնագործութիւնը
Թիֆլիսի նահանգում ան-
նշան տեղ է բռնում:
Աչքի ընկնող գործարան-
ներ կան միայն Թիֆլիս
քաղաքում իբրև նահան-
գական քաղաք:

Թիֆլիսեցի մօքաւաքիներ

5. ԲՆԱԿԻՉՆԵՐ, ԿՐՈՆ ԵՒ ԶԲԱՂՄՈՒՆՔ

Նահանգի բուն բնակիչները վրացիներ են, որ կազմում են բնակչութեան մեծ մասը: (460 հազար) Կան նաև հայեր (200 հազ.), թուրքեր (110 հազ.), օսեր (70 հազ.), ռուսներ (40 հազ.), հւրոպական ազգեր և ուրիշ լեռնական ցեղեր:

Վրացիներն ու ռուսները յունադաւան են, հայերը մեծ մասամբ լուսաւորչական, թուրքերը՝ մահմեդական:

Վրաց գիւղացիները պարապում են երկրագործութիւնով և այգեգործութիւնով: Լեռնականները՝ Թուշերը, Պշաւները, Խևուրները, և Օսերը պարապում են մեծ մասամբ անամսապահութիւնով: Քաղաքներում հայերի գլխաւոր զբաղմունքն է վաճառականութիւնն ու արհեստը, խել գիւղերում՝ երկրագործութիւնը:

6. ՆԱՀԱՆԳԻ ԳԱՀԱՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Բացի Թիֆլիսից, Թիֆլիսի նահանգն ունի հետեւեալ գաւառական քաղաքները:

Ա. Գորու գաւառ.

Գաւառական քաղաքն է Գորի. շինւած է Լեախւա և Կուր գետերի միացման տեղերում: Գորու մօտ, մի սարի մէջ, փորւած է Աւելիս-Ցիլս: անունով մի հին քարայր քաղաք: Այս գաւառում են գտնվում Սուրբ և Բարձում ամարանոցները:

Բ. Դուչեթի գաւառ.

Գորու գաւառից դէպի արևելք գտնվում է Դուշեթի գաւառը: Սրա գաւառական քաղաքն է Դուչեթ:

Գ. Թիօնեթի գաւառ.

Դուշեթի գաւառից դէպի արևելք գտնվում է Թիօնեթի գաւառը, որի կենտրոնը

Թիֆլիսեցի հայ կեն:


համարւում է Թիօնեթը:

Դ. Թիելափի գաւառ. — Թիօնեթի գաւառից դէպի արևելք գտնվում է Թելափի գաւառը: Գաւառական քաղաքն է Թիելափ:

Ե. Սղնախի գաւառ. — Թելափի գաւառից դէպի հարաւ ա-

բնելք գտնում է Սղնախի գաւառը, գաւառական քաղաքն է Սղնախ։
Սղնախի և Թերաւի գաւառները կոչվում են Կախէթիա։
Կախէթիան յայտնի է գինու արտադրութեամբ։

Զ. Բորչալի գաւառ. — Թիֆլիսի գաւառի հարաւ արև-
մտեան կողմը գտնում է Բորչալի գաւառը։ Սրա կենտրոնն
է Շուլաներ աւանը։ Այս գաւառումն է գտնում Ալլահվերդի



Սանահնի վանքը

պղնձի հանքը։ Գաւառի արևմտեան մասը կաղմում է Լոռու բարձրավանդակը։

Լոռում յայտնի են Հաղբատի և Սանահնի հայոց հին վանքերը, որտեղ կան Բագրատունեաց թագաւորների և յայտնի հայ իշխանների գերեզմանները։ Գաւառի բուն բնակիչները հայեր են, որի պատճառով վրացիները այդ գաւառը անւանել են Սօմխէթ (Հայերի երկիր)։ Լոռումն է գտնուում Դսեղ գիւղը, որը մեր յայտն՝ բանաստեղծ Յով. Թումաննեանի ծննդավայրն է։

Է. Ախալքալաքի գաւառ. — Բորչալի գաւառից դեպի արև-
մուտք գտնում է Ախալքալաքի գաւառը, որի գաւառական քաղաքն է Ախալքալաք։ Սրա մօտ է գտնուում Վարդզիա սարը, որի մէջ փորւած է 5—6 յարկանի մի քարայր քաղաք, իրեն եկեղեցիով։

Ծ. Ախալցխայի գաւառ. — Ախալքալաքի գաւառից դեպի արևմուտք գտնում է Ախալցխայի գաւառը։ Սրա գաւառական քաղաքն է Ախալցխան։ Այս գաւառումն են գտնուում Արաս-
թուման և Ուրաւէլ ամարանոցները։

Ախալքալաքի և Ախալցխայի գաւառները գտնուում են Ծալ-
կայի և Ախալցխայի բարձրավանդակների վրայ։

III. Կ Ո Վ Կ Ա Ս

Ժ. ՀԱՄԱՌՈՍ ՏԵՍՈՒԹԻՒՆ


1. ՄԱՀԱՄԱՆՆԵՐԸ

Այն երկերը, որ գտնուում է Կասպից, Սև ու Աղովեան ծովերի մէջ տեղը, կոչվում է Կովկաս։ Սա ունի մօտ $8^{1/2}$ հազար քառ. մղոն տարածութիւն։

Կովկասի սահմաններն են հիւսիսից՝ Ռուսաստանը, արև-
մուտքից՝ Աղովի և Սև ծովերն ու Տաճկաստանի մի մասը.
հարաւից՝ Տաճկաստանը, Պարսկաստանը, արևելքից՝ Կասպից լիճը։

2. ՄԱԿԵՐԵՒԽՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Կովկասի Մակերեւոյքը բազմազան է։ Կէսը լեռնուա է,
կէսը՝ հարթութիւն։ Լեռնուա մասն ունի նոյն իսկ ձիւնապատ
գագաթներ, իսկ հարթութիւնների մէջ պատահում են նոյն իսկ



Կովկասեան մեծ լեռնաշղթան

այնպիսինները, որոնք ծովի մակերեւոյթից ցածր են։

Սև ծովի ափերից մինչև Կասպից լճի ափը ձգւում է Կով-
կասեան մեծ լեռնաշղթան։ Նա ունի 1200 վերստ երկարու-
թիւն և բաժանում է Կովկասը երկու մասի. հիւսիսային Կով-
կաս և հարաւային Կովկաս կամ Անդրկովկաս։ Այդ լեռնաշղթայի
ամենաբարձր սարելն են՝ Ելբուս ($5^{1/2}$ կ.) և Կազբէկ ($5^{1/2}$ կ.)։

Անդրկովկասում գտնւում է մի լեռնաշղթայ, որ կոչում է Կովկասեան փոքր լեռնաշղթայ։ Այդ լեռնաշղթայի ամենաբարձր սարերն են՝ Մասիս կամ Արարատ (5 զերստ), փոքր Մասիս և Արագած կամ Աղագեազ (3^{1/2} զ.)։

Հիւսիսային Կովկասի մեծ մասը հարթութիւն է։ Անդրկովկասում կան հետեւալ հարթութիւնները։ Դարացի, Մուղանի և Շիրակի հարթութիւնները։



Կաղբէկ

3. ԳԵՏԵՐ ԵՒ ԼՃԵՐ

Կովկասի գետերի մեծ մասը իրենց սկիզբն առնում են Կովկասեան մեծ լեռնաշղթայից։ Նշանաւոր գետերն են Կուր, Արաքս, (Երասիս, Արագ), Թերեք, Կումա, Արանք բացի Կումայից, Թափւում են Կասպից լիճը։ Կուման չընասած Կասպից լիճն, Կորչում է աւազի մէջ։ Կուբան, Ռիօն և Ճորոխ թափւում են Սև և Աղովի ծովերը։


Կովկասի մեծ լիճը Գեղամայ կամ Սևանայ (Գեօգչա) լիճն է, որ ունի 70 վ. երկարութիւն, 30 վ. լայնութիւն։

4. ԿԼԻՄԱՆ, ԲՈՅԱՐԵՐԸ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՔԵՐԸ

Կովկասի կլիման բազմազան է։ Հիւսիսում բարեխուսն է,

իսկ հարաւում՝ տաք։ Խնչպէս կլիման, նոյնպէս և բոյսերն ու կենդանիները բազմազան ու բազմատեսակ են։

Կովկասը հարուստ է հանքերով։ Մտացւում է նաւթ, աղ, պղինձ, արծաթ, երկաթ, քարածուխ և այլն։



Ելբասս

5. ԲՆԱԿԻՉՉՆԵՐԸ

Կովկասն ունի մօտ 11 միլ. քնակիչ, Նրանք բաժանվում են մօտ 45 ազգերի։ Դրանցից 3 սիլ. ուսուներ են, 1^{1/2} միլ. վրացիներ, 1^{1/2} միլ. հայեր, մնացած՝ պարսիկներ, թուրքեր, քրդեր, լեզգիներ, չերքեզներ, արխազներ, հրէաներ, յոյներ, գերմանացիներ, ասորիներ և այլն։

6. ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Կովկասի բնակիչների զբաղմունքն է գլխաւորապէս երկրագործութիւնը, այգեգործութիւնը, անասնապահութիւնը, տնայնագործութիւնը, զինագործութիւնը և այլն։

Կովկասում կան կաշլի, թաղիքի, ծխախոտի, սապոնի, ձիթի, ապակու և այլ գործարաններ։ Կովկասը դրսի երկրների հետ կապւած է ցամաքային և ծովային բազմաթիւ ճանապարհներով։

7. ԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱԺԱՆՈՒՄԸ

Անդրկովկասն ունի 6 նահանգ, 2 վիճակ, մէկ շրջան: Նահանգներն են՝ Թիֆլիսի, Գանձակի, Բագրի, Երևանի, Քութայիսի և Սև ծովի: Վիճակներն են՝ Կարսի և Դաղստանի: Շրջանն է՝ Զաքաթալայի:

Հիւսիսային Կովկասն ունի 1 նահանգ և 2 վիճակ: Նահանգն է՝ Ստաւրոպոլի: Վիճակներն են՝ Կուբանի և Թերեքի

8. ԿՈՎԿԱՍԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Բացի Թիֆլիսից Կովկասում կան նաև հետեւալ նահանգական քաղաքները:

Ա. Գանձակի նահանգ.—Թիֆլիսի նահանգի արևելեան կողմը գտնուում է Գանձակի նահանգը, որի նահանգական քաղաքն է Գանձակը: Թուրքերը սրան անւանում են Գեանջա, իսկ ուռաները՝ Ելիզաւետապօլ: Շինուած է Կուր գետի մէջ թափող Գանձակ գետակի վրայ: Քաղաքն ունի մօտ 40,000 բնակիչ, որի մեծ մասը թուրքեր են, մասցածները՝ հայեր և ուռաներ: Քաղաքի հնութիւններից նշանաւոր են՝ պարսիկների Շահ-բասի մզկիթը, հայերի ս. Յովհաննես Եկեղեցին: Նահանգի բնակիչները պարապում են մեծ մասամբ մետաքսագործութեամբ և երկրագործութեամբ: Քաղաքի բնակիչները՝ այգեգործութեամբ, գիշեգործութեամբ և արհեստներով: Յայտնի են Գանձակի խաղողն ու նուռը:

Բ. Բագրի նահանգ.—Գանձակի նահանգից գէպի արևելք գտնուում է Բագրի նահանգը: Սրա նահանգական քաղաքն է Բագրի: Սա շինուած է Կասպից ծովի ափին և նաւահանգիստ է: Բագրուն յայտնի է նաւթի արդիւնաբերութիւնով: Քաղաքի շրջակայքը հարուստ է նաւթի հանքերով: Տարեկան արտադրությունը է մօտ 300 միլիոն փութ նաւթ: Հնակիչներից մեծ մասը թուրքեր են, մասցածները՝ հայեր և ուռաներ: Դրանցից մեծ մասն էլ աշխատում են նաւթահանքերում և նաւթային այլեալ գործարաններում:

Գ. Երեւանի նահանգ.—Գանձակի նահանգի հարաւային կողմը գտնուում է Երևանի նահանգը, որի նահանգական քաղաքն է Երեւանը: Սա շինուած է Զաբարու գետի վրայ: Նահանգի բնակիչներն են՝ հայեր, թուրքեր, քրդեր և յոյներ: Երևանը ծաղկած է մասաւանդ պարտիզանութեամբ: Յայտնի են Երևանու մրգերը, մանաւանդ խաղողն ու գուղմանն: Երևանից մօտ 18 վերսու հեռաւորութեան վրայ գտնուում է ջմիածինը, որտեղ նստում է հայոց կաթողիկոսը: Սյունեղ է գտնուում Գեորգիան նեմարանը: Երևանին մօտ հն գտնուում Քանաքեռ գիւղը, ուր ծնւել է մեր անդրանիկ վիպագիր՝ Խաչատուր Աբովյանը. Աւարտակ գիւղը, ուր ծնւել են՝ Ներսիսեան գպրոցի հիմնադիր Ներսէս Աշտարակեցին, մեր յայտնի գրողներ Պերճ Պուշկանն ու Սմբատ Շահազիզը. Օւական գիւղը, որտեղ նստում է հայոց տառերը գտնող Մեսրովը Մաշտոցի գերեզմանը, վերջապէս՝ Սեւանայ լիճը, որի մէջ եղած կղզու վրա շինուած է Սեւանայ հինաւուրց վանքը:

Դ. Քութայիսի նահանգը.—Սրա նահանգական քաղաքն է Քութայիս, որ շինուած է Ռիոն գետի վրայ: Բնակիչները մեծ մասամբ վրացիներ են, կան նաև հայեր և ուրիշ ազգեր: Նահանգի բնակչութիւնը պարապում է այգեգործութեամբ, երկրագործութեամբ և ծխախոտի մշակութեամբ: Այս նահանգի նշանաւոր քաղաքն է Սեւ-ծովի ափին շինուած նաև Բարում նահանգիստը: Երկաթի խողովակներով Բագուից Բաթում նաև թե են մղում:

Ե. Սեւ ծովի նահանգ.—Սրա նահանգական քաղաքն է Նօվօրոսիյսկ, որ միենոյն ժամանակնակիստ է Սեւ ծովի վրայ: Նահանգը հարուստ է խիտ անտառներով, քաղաքը՝ իր նաւահանգիստ՝ իր առեարով:

9. ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ա. Կարսի վիճակ.—Սրա գլխաւոր քաղաքն է Կարս, որ շինուած է Ղարաջայ գետի վրայ: Սա բերդաքաղաք է, այս քաղաքը ուռաներն առել են տաճիկներնց 1877 թւին: Կարսի

վիճակումն է գտնւում Անի աւերակ քաղաքը, որ յայտնի է իր հսութիւններով:

Բ. Դադասանի վիճակ.—Դադասանի գլխաւոր քաղաքն է Թեմիր-խան-Շատրա. Ամբողջ վիճակը լեռնոտ է. բնակիչները լեզգիներ են, պարապում են գլխաւորապէս խաշնարածութիւնով: Այս վիճակի քաղաքներից, Կասպից ծովի ափին, նշանաւոր են նաև Դերենի և Պետրովսկ քաղաքները:

Զ. Զաքարալայի ցըան. — Այս շրջանի գլխաւոր քաղաքն է Զաքարալան, որի բնակիչները մեծ մասամբ լեզգիներ ու թուրքեր են:

10. ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍ

Կովկասեան լեռնաշղթայից գէպի հիւսիս գտնւող Կովկասի մասը կոչւում է Հիւսիսային Կօվկաս: Մրա աչքի ընկնող քաղաքներից նշանաւոր են. —

Ա. Մատրապոլի նահանգ, որի գլխաւոր քաղաքն է Մատրապոլ:

Բ. Կուրանի վիճակ, որի գլխաւոր քաղաքն է Եկատերինոդար:

Գ. Թերեմի ցըան, որի գլխաւոր քաղաքն է՝ Վլադիկավկազ, որ շինւած է Թերեմ գետի ափին: Շրջանը յայտնի է իր Պետրովսկի հանքային ջրով:

Վ Ե Ր Ջ



Ց Ա Ն Կ

Նախագիտենիք. —

1. Մեր տունը 3
 2. Մեր հայրենիքը 4
 3. Հայրենագիտութիւն
- I. ԾՆՆԴԱՎԱՅՐ
- Թիֆլիս 5
 1. Հին Թիֆլիսը 6
 2. Հին բնակիչները 7
 3. Բնակիչների զբաղ-մունքը 9
 4. Նոր Թիֆլիսը 10
 5. Մկրենական կառա-վարչութիւնը 11
 6. Քաղաքամասեր 12
 7. Քաղաքային գումար 12

Նախական և պատկերակութիւններ

1. Թիֆլիսի մակերեսոյթի կազմութիւնը 13
2. Ջրագրական պայման . 14
3. Կիման 15
4. Գետնի յատկութիւնը . 16
5. Բուսականութիւնը
6. Կենդանիները 17
7. Բնակատեղի 18
8. Թիֆլիսի բնակիչները
9. Պարապմունքներ և ար-հետներ 19
10. Թիֆ. նշանաւոր հիմ-նարկութիւնները 20

Ներսիսեան դպրոց

Պոլիտեխնիկում 21

Կովկասեան թանգարան

Արձաններ 22

Կամուրջներ 23

Կովկ. Հայոց Բար. Էնկ

Եկեղեցիներ 24

Հիւանդանոցներ

11. Հաղորդակցական ճա-նապարհներ 25

Երկանին մարմիններ և մքնութային երեսոյթներ

1. Երկինք 26

2. Արկ և նրա տեսանելի շարժումը

3. Լուսին և նրա ակսա-նելի շարժումը 27

4. Աստղեր և նրանց տե-սանելի շարժումը

5. Մթնոլորտային տե-ղումներ և երևոյթներ . 28

Սօխարհագրական հասկացութիւններ

1. Հորիզոն կամ աչքի տե-սողութեան սահման . 29

2. Հորիզոնի կամ աշխարհի կողմերը 30

3. Կողմացոյց, կոմպաս . 31

4. Մակերեսոյթի կազմու-թիւնը 32

5. Գետ 33

6. Լիճ և ծով

7. Բարեխապնութիւն 34

8. Կիմա 35

Պարապմութեներ, իօխանուրին և բնակավայր

1. Երկրագործութիւն և հովտութիւն 36

2. Թափառական և նստա-կեաց կեանք

3. Արհեստանոց և գոր-ծարան 37

4.	Արդիւնաբերութիւն և արդինագործութիւն	38
5.	Ներմուծող և արտա- հանող առուտառութ	"
6.	Իշխանութիւն	"
7.	Աթական հաստատու- թիւններ	40
8.	Դիւղ	"
9.	Քաղաք	41
10.	Փողոց, հրապարակ, շուկայ	41
	Խալսավատաօսական ծանօ- րութիւն բարեկի	
1.	Մեր գասարանը	42
2.	Նկար կամ պատկեր	"
3.	Յատակագիծ կամ պլան	43
4.	Յատակագիծ նկարելը	"
5.	Գծաչափ կամ մասշտաբ	44
6.	Քարտէզ	"
II.	Մերջակիոր ԲՆԱԳԱԿԱԾՈՒԹ	
	Թիգիսի գաւառ	
1.	Սահմանները	45
2.	Բնագաւառի մակերե- ւոյթի կազմութիւնը	46
3.	Բնագաւառի կլիման	"
4.	Ջրագրական և լեռնա- գրական պայմանները	47
5.	Բնագաւառի բերքը	"
6.	Բնագաւառի արդիւնա- գործութիւնը	48
7.	Բնակիչների ազգու- թիւնն ու կրօնը	"
8.	Քաղաքներն ու գիւղերը	"
ա.	Կոջոր	49
բ.	Ծղնէթ	"
գ.	Մանգլիս	"
դ.	Բէլի-Կլուշ	50

ե.	Սագարեջօ	"
զ.	Մարտղոբ	51
է.	Աւճալա	"
ը.	Մցխէթ	"
թ.	Շըջակայքում	52
9.	Բնագաւառով ճանա- պարհները	"
10.	Պարապմունքները	"
	Թիգիսի նահանգ	
1.	Սահմանները	53
2.	Մակերեւոյթի կազմու- թիւնն ու կլիման	"
3.	Առողումը, բոյսեր և կենդանիներ	"
4.	Բերքն ու արդիւնա- գործութիւնը	54
5.	Բնակիչներ, կրօն և զբաղբունք	"
6.	Նահանգի դաւառական քաղաքները	55
III.	ԿՈՎԻՑՈՒԹ	
	Համառօս ենուրիւն	
1.	Սահմաններ	57
2.	Մակերեւոյթի կազմու- թիւնը	"
3.	Գետերն ու լճերը	58
4.	Կլիման, բոյսերը, կեն- դանիներն ու հանքերը	59
5.	Բնակիչները	60
6.	Արդիւնագործութիւնը	"
7.	Կովկասի վարչական բաժանումը	60
8.	Կովկասի նահանգական քաղաքները	"
9.	Կովկասի վիճակային և շրջանային քաղաքները	62
10.	Հիւսիսային կովկաս	"

7145

0003248

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003248

ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱԶՄԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԻՑ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Մեր գպրոցը, հայոց լեզվի I տարւայ նոր դասա-
գիրք երկրորդ բարեփոխւած տպագրութիւն . 25 կ.
- 2) Մեր գպրոցը, հայոց լեզվի II տարւայ նոր
դասագիրք 40 կ.
- 3) Մեր գպրոցը, հայոց լեզվի III տարւայ նոր
դասագիրք 45 կ.
- 4) Դասագիրք հայրենագիտութեան, գ. տարւայ
երկրորդ բարեփ. տպագր. 35 կ.

Պահեստ
«Դ. Ի. Ռ»
գրավածառանցում

ՀԵՏԶՀԵՏ ԼՈՅՍ ԿԲ ՏԵՍՆԵՆ

- 1) «Մեր գպրոց», հայոց լեզվի IV տարւայ դասագիրք,
ամբողջովին նորութիւն, 1) «Գեղագիր» ուղղագրութեան ձե-
ռագիր պատկերագարդ օրինակներ, երկու մասով և 3) «Հայ-
րենագիտութեան դասագրքի» գ. տարին՝ պատմական մասը
4) Հայրենագիտութիւն - երեանի նահանգի և 5) Հայրենա-
գիտութիւն՝ Գանձակի նահանգի: